ԳԻՐՔ LVI



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԲՏՐԱՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՏ, 7.
1909

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խաւարի մէջ. Ս. Բօճճor 3
Կեանք. բանաստ. Մ. Ենգիբարեան 7
Տ. Կոստանդին Ս. Բարձրբերդցի. Մ. Ա. Օ. 9
Բլբուլ } Բանաստ. Ցարութիւն Պետրոսեան 19
***
Ի՞նչ է հասարակութիւնը. Pessimist 20
Քօսա-դաղ լերան վկան. Լ. Խանզադէ 30
Ժողովրդի մէջ. Բօդէդէրի. Թարգմ or. Ն. Աղանեանց . 41

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՐԹՈՂԻ ՍՏԱՄԲԱ 1709—1909 (Վրացերէն ապարան) Զ. Ճիճինաձէի. Գիւտ ա. f. Աղանեանց։—Սաստուած գրքեր 45

ԱՄՍՕՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայութեան երկու հատուածները Ա. Վ.— Նամակ Վաղարշապատից Հայ.— Մանթաշեան ընտանիքի կրած կորուստը։—Լուրեր 47

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ 59

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակ է

ԳԻՒՏ ա. ք. ԱՂԱՆԵԱՆՑԻ

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Թ

ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ LVI

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷՔՏՐԱԵԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ 7.
1909

ԽԱՒԱՐ ԳԻՇԵՐԻՆ

Կէս գիշերին մերկ արդարութիւնը վեր կացաւ գերեզմանների և քայլեց դէպի մարդկանց բնակարանները։

Գիւղը լուռ էր ու կծկուած. ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէ լսւում. չէ լսւում նոյնիսկ շների հաչոց կամ վնգոց։

Հորիզոնում չէ փայլում և ոչ մի ասաղ. անթափանց, սև խաւարը իջած է գիւղի վրայ, և այդ խաւարը իր ահաւոր սոսկումով ասես ճնշեցրել է մարդկանց։

Ցրտաշունչ քամի է փչում և մերկ արդարութիւնը դողում, սարսռում է ցրտից. նա կուչ եկած քայլում է, հաքայլում։ Ահա և գիւղը իր բնակարաններով, որոնք նման են լուռ դամբարանների, որոնց տակ թաղնուած են կենդանի-մեռելներ։ Նա մտաւ գիւղը և ապաստան է փնտրում իր մերկ մարմինը մի անկիւնում թաղցնելու այս խստաշունչ բուքից։

Առաջին հանդիպած դուռը թակեց նա իր սառած, ոսկրոտ մատներով։

—Ո՞վ է. ներսից լսուեց մի խռպոտ ձայն։

—Ես եմ, արդարութիւնը, մի ապաստան տուէք։

—Ինչո՞ւ ես շրջում այսպիսի ահաւոր գիշերին։

—Ինչ անեմ, ապաստան չունեմ. երկրի երեսին ամեն տեղ շրջել եմ, տեղ չեմ թողել. որտեղ գնացի՝ հալածեցին մարդիկ. միայն այս գիւղն է, որ չեմ շրջել. բարի եղէք, ծեր յարկի տակ տուէք ինձ ապաստան։

—Չէ, տեղ չկայ, գնա՛, այսպիսի գիշեր դուռ չեն բաց անի. չէք տեսնո՞ւմ, ինչպէս է տնքում գիշերը։

—Կարծեմ դուք գիւղի հովիւն էր, բարի եղէք, տէր հայր...

—Չէ, չենք կարող, ամեն մի չարիք ծնւում է էս գիշերին։

—Դուք խիղճ ունի՞ք։

—Ունիմ.

—Զգայո՞ւն։

—Զգայուն։

—Երբ որ խիղճ ունէք, ինչո՞ւ անապատանին տեղ չէք տալիս։

—Դա խղճի բան չէ, այլ կամքի։

Քահանայի անից հեռանալով՝ խեղճ արդարութիւնը մի քանի դռներ էլ բաղխեց, բայց ոչ ոք ծայն չը հանեց. ամենքը քնած էին, դուրէ և արթուն բայց չէին խօսում. ահռելի խաւարից, երկունքով բռնուած սև դիշերի տնքոցից՝ սսկել ու ծնչուել էին մարդիկ։

Նա մօտեցաւ մի մեծ դռան ու բաղխեց։

—Ո՞վ է. լսուեց մի դողդոջ ծայն։

—Արդարութիւնն եմ, մերկ եմ, տեղ տուէք։

—Հեռո՛ւ գնա, այսպէս էս դիշերին ո՞վ է դժուել քո առաջ դուռը բանալ, երբ չար ոգիները սկսել են քրքջալ ու ոռնալ։

—Մի անկիւն, ի սէր Աստծոյ։

—Չկա՛յ, չկա՛յ. հեռացի՛ր։

—Այնտեղ գոնէ տուէք, որտեղ նստում է ծեր կատուն։

—Ինչ ես վայր ի վերոյ խօսում, ո՞վ է խենթացել քեզ տեղ տալ կամ դուռը բանալ այսպիսի մի դիշեր, երբ սոսկումն է մաղւում երկրի վրայ, անէծք թափւում երկնքից և յաւիտենական նզովք է տարածւում ամենուրէք. եթէ դուռը բանանք, նրանք կը գան և ներս կը սողան քեզ հետ մէկտեղ։

—Մի՛ վախենաք, հաւատացէք, որ ոչ մի բան չի պատահի։

—Գլուխներս մի ցաւացնի. արդարութիւն չէ ինչ ուզում է լինի, մենք դուռը բաց անողը չենք։

Արդարութիւնն էլ չը խօսեց, կանգնեց պատի տակ։ Այդ վայրկենին սաուերի նման մէկը անցաւ նրա մօտով ու թակեց դուռը՝ ասելով.

—Բացէք դուռը։

—Ո՞վ է։

—Ես եմ, զարիբի մէկը։

—Ի՞նչ ես ուզում։

—Մի տեղ տուէք։

—Տեղ չկայ, այսպիսի գիշերին դուռը չեն բաց անի։

—Բացէք, ահա ձեզ ոսկի ինչքան կամիք։

Դուռը ճռնչալով բացուեց. հիւրին ներս ընդունեցին։

Մերժուած արդարութիւնը կանգնել էր շէմքում ու լսում էր նրանց խօսակցութիւնը։

Տանտէրը հարցնում էր.

—Ո՞վ ես դու։

—Ա...արդարութիւնը.կակազելով ասաց հիւրը.—ահա ձեզ ոսկիները։

Տանտէրը առաւ ոսկիներն ու նորից ասաց.

—Ախր հէնց նոր արդարութիւնը դիպաւ մեր դռան ու գնաց. մենք չընդունեցինք նրան։

—Նա արդարութիւնը չէ եղել, ես եմ ...ութիւնը։

—Ի՞նչը։

—Իսկական արդարութիւնը։

Արդարութիւնը լսեց այդ բոլորը ու էլ չը համբերեց՝ դռռաց դռան ետևից.

—Ես՝ արդարութիւնս այստեղ եմ. ո՞վ է այդ սև հոգին, որ ստում է. ասացէք։

—Ներողութիւն, արդարութիւն եղբայր, ա՞խ ստատանան տանի, ստութիւն եղբայր, ես եմ, ես։ Հա-հա-հա, տեղ չես հարո՞ւմ։

—Լպիրշ անամօթ, չես էլ ամաչում, ծիծաղո՞ւմ ես. ի՞նչու ես ստում, դո՞ւ ես արդարութիւնը։ Ինչո՞ւ ես նեղ տեղերում իմ անունը արծարծում, ու ինձ էլ ստութիւն անուանում...

Այդ ժամանակ տանտէրը հչաց.

—Չէ, սրանք ոսկիներ չեն։

—Ինչ էք ասում, հանդստացրեց նրան հիւրը. գիշերները չի ճանաչուում, և երկրորդ էլ այսպէս առատ լոյսի մէջ ոսկին կորցնում է իր փայլը. պահեցէք մինչև առաւօտ, տեսէք եթէ ոսկի չէ՝ յետ տուէք ինձ։

—Լաւ. համաձայնեց տանտէրը։

Արդարութիւնը դլուխը քորելով հեռացաւ. ճանապարհին

բոլոր պատահած դռները թակեց. ոմանք չէին պատասխանում, ոմանք էլ զայրացած ասում էին. «տեղ չկայ»։ Իսկ ոմանք զարմանում էին. «աշխարհում քանի՞ արդարութիւն կայ»։

—Մէկը. պատասխանում էր արդարութիւնը։

—Որ մէկը՝ էլ ինչ ես ուզում. արդէն մէկին ընդունել ենք։

—Ա՜խ. հառաչում էր արդարութիւնն ու հեռանում։

Դողդոջալով նա գնում էր ու ինքն իրան խօսում.

—Ամեն տեղ իմ անունով ներս է մտել այդ զարշելին ու ամենքին խաբել, ամենքի աչքը կապել, կեղծ ոսկու փայլով կուրացրել և գնացել տների վերի անկիւնում նստել։ Խե՜ղճ, խե՜ղճ մարդիկ. ոսկու փայլը՞...

Ցրտից նրա ատամները չխկչխկացին. էլ չխօսեց նա, շարունակեց քայլել՝ կծկուած ու լուռ։ Մերկ, լերկ մարմինը սառչում էր։

Գիւղում խեղճը տուն չթողեց, բոլորի դուռը բաղխեց, աղաչեց խնդրեց՝ ապաստան տուող չեղաւ, այժմ գիւղի եզրին էր հասել, պէտք է դուրս գար գիւղից ու շարունակէր երկրի վրայ իր թափառիկ կեանքը։ Մի տուն, միայն մի տուն էր մնացել. նրա դուռն էլ կը թխկացնէր, ապաստան կը խնդրէր. դեռ յոյս ունէր, որ գոնէ այդտեղ ապաստան կտան իրան։

— Թրրխկ, թրրխկ... թակեց դուռը սառած մատներով։

—Հ՞ը, ի՞նչ ես ուզում... գոռաց մի ձայն և վայրենապէս լսուեց որոտ ու փայլատակեց բոց։

Արդարութիւնը ընկաւ գետին՝ թպրտաց, քարերը չանգռեց, երեսը քսեց հողին, գալարուեց, օրհասական ցնցումներ արաւ ու լռեց...

Վերջին տունը՝ գիւղի դատաստանատունն էր և արդարութիւնը նրա զոհը դարձաւ։

Երկինքն ու երկիրը դղրդացին, ամպրոպ ու կայծակ, շանթ ու որոտ խառնուեցին իրար. փայլակների բոցերով մի վայրկեան լուսաւորուեց խաւարը և ապա ամեն ինչ մթնեց ու անտեսանելի դարձաւ։

Աւերիչ մրրիկը հեծեծալով վազեց տիեզերքի մէջ...

Խենթացած հողմերը ծեծեցին ժայռերի կատարները...

«Ա-ու-ու-ու...տաւ կաղկանձեցին շները գիլ ոռնոցով։

Մեծ արդարութիւնը մեռաւ այդ խաւար գիշերին՝ արիւնոտուած, բզկտուած ու մերկ...

Ս. ՐՈՖՖՕՐ

ԿԵԱՆՔ

I

Ամարանոցում, շքեղ զարդարուած
Ընտիր նախաճաշն առաջին դրած,
Մայր անտառի խիտ կենսատու հովին,
Կեանքն էր վայելում իշխանի որդին։

Անցաւ երկու ժամ, դրին նոր սեղան
Բերին խորտիկներ համով զանազան.
Անուշ ըմպելիք, քաղցրահամ ջրեր
Եւ եղեմական ընտիր պտուղներ...

Անձնատուր շուայտ, նուրբ վայելչանքին
Եւ արևելեան փարթամ ճաշակին,
Մերթ նայում էր նա իւր ճոխ սեղանին
Մերթ արևի տակ այրուող մշակին։

Երբեմն էլ նրանց խրախոյս կարդում,
—Դէ, շուտ իմ տղայք, լաւ էք աշխատում
Ինչ էր մտածում թէ նա այդ ժամին—
Աստծուն է յայտնի մարդկային գաղտնին
Բայց մենք տեսնում ենք, որ կեանքը այստեղ
Մէկին դժոխք է, միւսին խիստ շքեղ։

II

Սոված եմ, հայրիկ, ինձ բանթող արա,
Սաստիկ ծարաւից սիրտս կը դողայ,
Երեկ այս ժամին մենք երկու անգամ
Հաց էինք կերել, թող քիչ դընջանամ։

Զայնդ, անպիտան, ասում եմ, կտրիր.
Թող հոգիդ դուրս գայ քաղցից մեռիր.

Մի՞թէ կարող ենք որ երբ կամենանք
Մեր հացը ուտենք, մենք էլ դընչանանք։

Մենք հո մարդիկ չենք, այլ մի անասուն
Որ պէտք է տանջուենք մինչև իրիկուն,
Մենք վարձկաններ ենք և ոչ գործի տէր,
Վարձկանի օրը միշտ սև է եղել։

Ներիր, սիրելիս, որ խիստ զայրացած
Խօսում եմ քեզ հետ. ես էլ եմ քաղցած.
Բայց թէ ում ինչ փոյթ. չէ՞ փող են տալիս,
Այդպէս է կեանքը, ճար չկայ, հոգիս։

Հող չունենք ցանենք, այդի՝ որ ջրենք,
Էլ մեր ապրուստը մենք ինչով ճարենք.
Էլ որտեղից մենք վճարենք հարկեր,
Էլ ի՞նչպէս հոգանք մեր ծով կարիքներ։

Միշտ հլու, համեստ, բառի անուան տակ
Մենք շատ ենք վարժուել երկար ժամանակ.
Մեր նախնիքը մեզ այսպէս են կրթել
Մենք պարտաւոր ենք մեր մեծին լսել։

Ինձ մի՛ նախատիր, որ ես քո մասին
Լաւ չեմ հոգացել իր ժամանակին.
Պապդ ինձ թողեց մի ժառանգութիւն.
Ոչ արուեստ, ուսում, այլ մշակութիւն։

Այժմ դանակը ոսկորին հասած,
Հարկ է այդ մասին մի բան մտածած.
Ով որ ուզում է մարդու պէս ապրի
Պէտք է սեփական մի գործ ստեղծի։

III

Իշխանի որդին վեր կացաւ տեղից,
Գուցէ զգացուած մշակի խօսքից,
Իսկոյն պատուիրեց նա իւր ծառային
Առատ կերակուր տալ մշակներին։

Մ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԲՍՐԶՐԲԵՐԴՑԻ

130. Կիլիկիոյ թագաւորութիւնը յանկարծական վտանգի մը դիմաց կը գտնուէր, զի Իկոնիոյ հզօր սուլթանութեան կործանումէն ետքը, ինքն չէր կրնար իւր կեանքը ապահովել։ Հեթում դեսպաններու ձեռքով Բաղուէ խաղաղութիւն խնդրեց (1244), և ստացաւ զայն յանձնելով Իկոնիոնի սուլդանին ընտանիքը, որք իրեն ապաստանած էին (1245)։ Թաթարներ իրենց արշաւանքը աբևմուտքէն դարձուցին դէպ հարաւ և աւերեցին Վասպուրականի, Տուրուբերանի և Միջագետքի քաղաքները։ Ուխաթա մեծ խանին մեռնելէն ետքը, Հեթում նորա յաջորդ Գիուշ խանին հետ նորոգեց խաղաղութիւնը, իւր եղբօր Սմբատ Գունդստապլին դեսպանութեամբ (1246), որ է նոյն ինքն Սմբատ պատմիչը։ Այդ քաղաքական դեսպանութեան կ'երևի թէ ընկերացաւ նաև Վարդան վարդապետ, որ կաթողիկոսական նուիրակութեամբ Մեծ Հայք կ'երթար Սսոյ կանոնները հրատարակելու, և այն կողմերու եպիսկոպոսներէն ընդունելութեան խոստումներ և յայտարարութիւններ ստանալու, ինչպէս և յաջողեցաւ առնուլ գլխաւոր աթոռներէն և կաթողիկոսին բերաւ (1248)։ Կաթողիկոսն ի փոխարէն ճոխ կերպասներ և եկեղեցական զգեստներ յղեց անոնց ընծայ։ Անցողաբար յիշենք քանի մը նշանաւոր պարագաներ, ինչպէս են Արտազու վանքին վերանորոգութիւնը Յովսէփ եպիսկոպոսի ձեռքով և կաթողիկոսին նպաստներով, Ասորի պատրիարքներուն Հոռոմկլայի մէջ կրկին հաստատուելով Հայոց թագաւորութեան և Հայոց հայրապետութեան հովանաւոյն ներքև պատսպարուիլը. Հեթումի Կիպրոս երթալով Գաղղիոյ Լուդովիկոս Թ. Սուրբ թագաւորին հետ տեսակցիլը, որք այդ միջոցին տեղի ունեցան։

131. Վերջին պարագայն կը յիշեցնէ այն մօտաւորութիւնը Լատիններուն հետ, զոր արդէն յիշած ենք և որուն այնչափ հետամուտ էր Հեթում, Կոստանդին կաթողիկոսն ալ իւր դիտումին մղելով։ Պապերը այդ պատրաստականութենէ քաջալերուած

սկսան կամաց կամաց հայ եկեղեցւոյ գործերուն և դաւանութեան ալ միջամտել, այդ ինչը սխալ և այն ինչը անկանոն ցուցնելով, և իրենց նմանութեան և հպատակութեան հրաւիրելով։ Այս կարգէն էր Իննովկենտիոս Դ. պապին շարժած խնդիրը (1250), թէ պարտ է զամենասուրբ Հոգին Աստուած խոստովանել ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ (Վարդ. 148)։ Կոստանդին կաթողիկոսի համար կ'ըսուի այդ առթիւ թէ Հռոմկլայ կը նստէր, որ կը ցուցնէ թէ բոլորովին խափանեալ չէր Հռոմկլայի կաթողիկոսարանը, Սսոյ կաթողիկէին շինութենէն ետքն ալ, և Կոստանդին մերթ այստեղ և մերթ այնտեղ կ'անցնէր իւր ժամանակը։ Սակայն ժողովը գումարեցաւ ի Սիս. և այդ ժողովին մասնակցեցան Յունաց և Ասորւոց և Այլազգեաց քրիստոնէից եկեղեցականներ (Կիր. 187), որ Կիլիկիա կը գտնուէին Հայոց հովանւոյն ներքև։ Յոյնէր ի Հօրէ միայն պընդեցին, Ասորիներ երկու կարծիքի բաժնուեցան. գումարուած Հայերն ալ կ'երևի թէ համամիտ համաձայնութիւն չունեցան, որ պարտաւորուեցան Արևելեայց գրել և նշանաւորագոյն անձերու կարծիքները ուղել, որպիսիք էին Յովհաննէս Վանական և Յովսէփ Արտազեցի և Կիրակոս Գանձակեցի վարդապետներ։ Պատասխանները ընդարձակօրէն յառաջ կը բերէ նա ինքն Կիրակոս, որք առհասարակ նպաստաւոր էին հռոմէական դաւանութեան, ինչպէս Վարդան ալ կը յիշէ (Վարդ. 148)։ Մեր եկեղեցւոյ դաւանութիւնը ընդհակառակն տարբեր է լատինականէն, և յայդմ մեք ալ Յոյներուն համաձայն ենք, և ապագայ ժամանակին ալ Լատիններէ տարբերութիւններս մեծ խնդիրներու տեղի տուած է։ Սակայն Կոստանդինի ժամանակ դեռ նոր էր այդ խնդիրը Հայոց համար, և միւս կողմանէ սիրոյ և միաբանութեան փափագը ուժգնապէս պաշտպանուած էր արտաքին նպաստից ակնկալութեամբ։ Նոյն իսկ խնդիրն ալ ներքին երկդիմութիւն մը կը պարունակէր, յէութենէ Հօր և Որդւոյ լինելու և ի Հօրէ և յՈրդւոյ բղխելու մէջ։ Ահա պատճառներն, որք յորդորեցին Հայերը ոչ հակառակիլ Հռոմի առաջարկութեան, այլ արտաքին համակերպութեան եղանակով խնդիրը փակել (1251), թէպէտ իրենք իրենց եկեղեցւոյ մէջ ոչ մի նշանակութիւն չտուին այդ խնդիրին։

132. Կոստանդինի կեանքին նշանաւորագոյն կէտերը քաղեցինք. իւր մնացորդ օրերուն մէջ յիշատակելի գործ մը չունինք։ Կը յիշուի նորա ներկայութիւնը Զապէլ թագուհիին մահուան առթիւ (1252), որուն մեծահանդէս թաղում ըրաւ և մահուան օրը յայսմաւուրքի մէջ արձանագրեց (յունուարի 23)։ Այդ միջոցին պէտք է դնել Յոյներու հետ բանակցութիւնը քաղկեդոնական խնդրոյն վրայ, որուն համար Կոստանդուպոլիս նուիրակ

ղրկուեցաւ վարդապետն Յակոբ, այր բանաւոր և իմաստուն (Կիր. 212), որ անշուշտ նոյն ինքն Կոստանդինի յաջորդ կաթողիկոսն է։ Այդ բանակցութեանց վրայ տեղեկութիւններ կը պակսին, միայն թէ Յակոբ ամօթով չմնաց օտարներու առջև և պաշտպանեց իւր եկեղեցին (Կիր. 212)։ Երբ Հեթում քաղաքական խնդիրներու համար որոշեց համակերպիլ Թաթարաց խանին հրաւէրին և անձամբ նորա տեսութեան երթալ (1254), Կոստանդին ընտիր եկեղեցականներու խումբ մը անոր ուղեկից տուաւ, որոց գլուխը կը գտնուէր վերոյիշեալ Յակոբ, և որոց մէջ կը յիշուին Ստեփանոս եպիսկոպոս, Մխիթար վարդապետ, Բարսեղ քահանայ, Թորոս աբեղայ և Կարապետ դրաներէց։ Պէտք է գիտնալ թէ Թաթարներ իրենց արշաւանքին սկիզբը հեթանոս էին, այլ նուաճեալ երկրին կրօնքին յարելու տրամադրութեամբ, և այդ միջոցին էր, որ ոչ միայն արևելեան, այլև արևմտեան քրիստոնեաներ աշխատեցան Թաթարները իրենց կրօնքին հրաւիրել, այլ անոնց գաղափարները վերջնականապէս մահմեդականութեան մէջ գտան իրենց համաձայնութիւնը և անոր յարեցան։ Այդ պարագային հետ կապ ունի անշուշտ Հեթումին ընկերացող եկեղեցական պատգամաւորութիւնը։ Հեթումի այցելութեան հետևանքը աւելի քաղաքական խաղաղութեան նպաստեց, բայց քրիստոնէից համար շատ ազատութիւններ ալ ընդունուեցան։ Այդ այցելութիւնը Մեծ Հայոց քրիստոնեայները քաջալերեց, այնպէս որ երբ Հեթում Կիլիկիա դարձաւ (1255), եկեղեցական օգուտներ ալ ձեռք բերած կրցաւ ըսուիլ։

133. Հեթումի բարեկամութիւնը Թաթարներու հետ հակառակ ազդեցութիւններ գործեց օտարներու վրայ։ Իզզէտտին սուլթան Իկոնիոյ պատնրազմ բացաւ Հեթումի դէմ, այլ Հեթում յաջողեցաւ յաղթել Թաթարներու օգնութեամբ, և մինչև իսկ մտածեց Թաթարներու օգնութեամբ Ս. Տեղիքը Եգիպտացիներուն ձեռքէն առնել։ Միւս կողմանէ Կղեմէս Դ. պապը (1265—1269), յուսալով որ Հեթում կարող է Հայերուն հետ Լատիններուն ալ օգտակար ըլլալ, Արևելքի մէջ գտնուող Լատինները Հեթումի պաշտպանութեան ներքև դրաւ (1265)։ Այլ Եգիպտացիք Փնտուխդար սուլթանին առաջնորդութեամբ ուզեցին Թաթարներէն յաղթուելնուն վրէժը Հայերէն լուծել։ Հեթում անդամ մը ևս Հուլաւուն խանի այցելեց (1264), նոյն իսկ խանին հրաւէրով, որ տարին Վարդան վարդապետ Արեւելցին ալ հրաւիրուած էր Խուրուլթա կոչուած տարեմուտի տօնին (Վարդ. 155)։ Բայց Եգիպտացւոց սպառնալիքին վրայ անդամ մը ևս անձամբ գնաց խանին մօտ պէտք եղած օգնութիւնը խնդրելու, այլ ինքն չդարձած Հայեր յաղթուե-

ցան և արքայորդիներէն Թորոս սպանուեցաւ և Լեւոն գերուեցաւ, Սիս առնուեցաւ և Կիլիկիա աւերեցաւ (1266)։ Կոստանդին, որ երկար այլ բաւական խաղաղ պաշտօնավարութիւն ունեցած էր, իւր ծերութեան ժամանակին տագնապալի օրերու հանդիպեցաւ և կսկիծէն իւր կեանքն ալ վտանգուեցաւ, և քիչ ետքը վախճանեցաւ (1267 ապրիլ 9)։ Կոստանդինի անձնաւորութեան վրայ կանուխ մեր կարծիքը յայտնեցինք, թէ առանց առաջնակարգ և նշանաւորագոյն հայրապետներէն մին լինելու, կրցաւ կանոնաւոր պաշտօնավարութիւն ունենալ, այլ խաղաղութեան սիրով Լատիններուն չափազանց մօտենալը ապագային վտանգաւոր դուռ մը բացաւ։

134. Կոստանդինի ժամանակին պատմութիւնը լրացնելու համար պէտք է յիշել քանի մը նշանաւոր վարդապետներ, որ այս միջոցին փայլեցան. Գլխաւորն է Յովհաննէս վարդապետ Վանական (վախճանեալ 1251), Մխիթար Գօշի աշակերտ, և բազմաթիւ աշակերտաց ուսուցիչ, ծննդեամբ Տաւուշեցի և վանքով Խորանաշատցի, զոր ինքն իսկ կանգնեց և շուտով կրցաւ նշանաւոր կեդրոն դարձնել. ոչ միայն աշակերտներ հաւաքել, այլ նախնեաց մատենագրութեան ճոխ հաւաքածոյ կազմել։ Պատմիչ ալ եղած է, բայց պատմութիւնը մեզի չէ հասած։ Իւր աշակերտներէն է Վարդան վարդապետ Արեւելցին (վախճանեալ 1271). որ յատուկ պատմութիւն մը գրած է, Միքայէլ Ասորիի պատմութիւնը թարգմանած է և բազմաթիւ մեկնութիւններ է գրած։ Վանականին աշակերտներէն է նաև Կիրակոս վարդապետ Գանձակեցի, նոյնպէս պատմաբան և աւելի մտադիր եկեղեցական դիպուածներու, թէպէտ երբեմն առանց կարեւոր ընտրողութեան։ Կաթողիկոսին և յիշեալ պատմիչներուն Լատինաց միջամտութեանց հանդէպ զիջող գըտնուելը, ուրիշներուն ալ առիթ ընծայեց անոնց խօսքերը խստութեամբ հերքելու, և յանուանէ պէտք է յիշենք Մխիթար քահանայ Սկեռացին և Վահրամ վարդապետ Սեաւլեռնեցին։ Վանականի աշակերտութենէն է նաև Մաղաքիա աբեղայ Նեստողաց ազգին պատմիչը։

135. Իբրև հետաքրքրական դիպուած մը յիշատակենք մոլորեցուցիչ Դաւիթին պատմութիւնը (1250)։ Գեղարքունի գաւառին Ծար աւանին մէջ կ՚ապրէր Դաւիթ, շինական ջաղացպան մը, որ յանկարծ Քրիստոսի տեսիլքներ պատմելով և հրաշագործութեան համբաւ հանելով, սկսաւ իբր նոր աղանգաւոր մը իրեն հետևողներ կազմել։ Դաւիթ նոր օրէնք և նոր վարդապետութիւն չունէր, այլ իւր խօսքերն էին՝ Զերկուշաբթի օրն պահեցէք, յիշոցք մի տայք, եկայք համբուրեցէք զիս, եւ Թողեալ լիցի մեղք ձեր եւ ազգին ձեր մինչեւ

յիսնն ազգ (Կիր. 182), որով կը տեսնուի թէ պարզապէս սուտ հրաշագործ խաբեբայ մի էր, որ զանազան ճարտարութիւններով կրցեր էր գողնալ ժողովուրդին բարեմտութիւնը և շահու աղբիւր մը բանալ։ Իւր զօրութեան և գործունէութեան կեդրոնն էր ահագին խաչ մը, զոր ձիթահանքի գերանով կազմած և Ծարի եկեղեցւոյ դուռը կանգնած էր, և անոր տաշեղները և իւր ջաղացքին հատիկները, և մատաղի զուարակին միսը և ոսկրներուն փշուրները իբրև մասունք կը բաշխէր ուխտաւորներուն։ Իւր շուրջը ունէր իրեն աշակերտած քահանաներ, որք արբանեակի դեր կը վարէին, Դաւիթին ոտքը կը լուային, և այն ջուրը՝ իրենք կիրենք և ուխտաւորները սրսկելու կը գործածէին։ Ինչ որ Դաւիթի ըրածներուն գայթակղական մասն էր, անառակ և լկտի վարմունքներու ասպարէզ բանալը, չարագործները քաջալերելը, իշխանութիւն չյարգելը, և եկեղեցական հաստատութիւնները անարգելն էր։ Գիւղին տէրն ալ, որ պարսիկ մըն էր, եղած արդիւնքէն բաժին առնելով, Դաւիթը կը պաշտպանէր։ Դաւիթ ազգային զգացումներն ալ կը գրգռէր, և զինքն ընիկ Արշակունի հռչակելով, իւր զաւակներէն միոյն թագաւորութիւնը և միւսին կաթողիկոսութիւնը կը գուշակէր։ Կաթողիկոսին հեռաւորութեան պատճառով՝ վարդապետներուն գլխաւորը՝ Յովհաննէս Վանական ձայն բարձրացուց այդ անկարգութեան դէմ։ Իրեն ձայնակցեցան Վարդան և Կիրակոս պատմիչ վարդապետները, Համազասպ եպիսկոպոս Հաղբատու և Գրիգորիս եպիսկոպոս Դատևանքի, որք միաբանութեամբ Ծար եկան, մոլորութեան բոյնը ջնջելու։ Գիւղացիներ նախ ընդդիմացան, բայց նզովքի երկիւղով խաչը կործանեցին, Դաւիթը յանձնեցին, զոր եպիսկոպոսներ երաշխաւորութեամբ Դառնի քաղաքին յանձնեցին, ուր կային իւր ազգականները և այնպէս բոլորովին անհետացաւ Դաւիթի գործն ալ, ինչպէս կ'անհետանան ամէն մոլոր և անհիմն ձեռնարկներ։

Տ. ՅԱԿՈԲ Ա. ԿԼԱՅԵՑԻ

136. Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին յաջորդեց Յակոբ Ա. Կլայեցի, որ Տարսոնացի և Սսեցի ալ կոչուած է, և Գիտնական մականունով պատուուած։ Այդ մականունը կ'արդարանայ անշուշտ այն նուիրակութեամբ զոր Կոստանդնուպոլսոյ մէջ վարեց կաթողիկոսին կողմէն, և ուր Յոյներուն հետ վիճելով հայ եկեղեցւոյ դաւանութիւնը պաշտպանեց։ Նոյն ինքն էր, որ Սմբատին ընկերացաւ Թաթարներու խանին այցելելուն առթիւ։

Կ՚ըսուի թէ մատենագրութիւններ ալ ունեցաւ. այլ մեղի հասնող ճաշակը միայն Աստուածածնայ ծննդեան շարականն է, Երգեցէք իւր սարօք, որ բաւական է նպաստաւոր գաղափար մը տալ իւր հեղինակին վրայ։ Յակոբի ընտրութիւնը կատարուեցաւ Կոստանդինի մեռնելէն քանի մը ամիս ետքը, Հեթումի հաւանութեամբ և ժողովական ընտրութեամբ (1267)։ Յակոբ իւր կաթողիկոսութեան սկիզբը փափագեցաւ ընդհանրական թղթով մը օրհնել և հրահանգել՝ իւր ժողովուրդը, այլ Շնորհալիի ընդհանրականին յարգը ճանչնալով, նոյնը կրկնեց և ցրուեց, որ եթէ մէկ կողմէն խոնարհամտութիւն կը ցուցնէ, միւս կողմէն ալ գովելի է այնու, որ արժանաւորաց արժանիքը գիտնալը մեծագոյն իմաստութիւնն է։ Յակոբ բարեյաջող սկզբնաւորութիւն մը ունեցաւ Լևոն արքայորդւոյն գերեզարձով (1269)։ Հեթում ծերացած անոր յանձնեց թագաւորական իշխանութիւնը, և ինքն կրօնաւորեցաւ Դրազարկի վանքը Եղբայր Մակար պնունով, այլ հազիւ քանի մը ամիս վայելեց առանձնութիւնը և վախճանեցաւ նոյն վանքին մէջ (1269)։ Լևոն մեծ սուգ ունեցաւ և հիւանդացաւ, և շրջակայ իշխաններէն բարեկամական ցոյցեր ստացաւ, և ապաքինելէն ետքը օծուեցաւ Յակոբ կաթողիկոսի ձեռքով (1270)։

137. Յակոբի կաթողիկոսութիւնը իբր 20 տարի շարունակեց (1267—1286), այլ հետաքրքրական դէպքեր կը պակսին, և քանի որ ուրիշ կողմանէ գիտեմք թէ կարող անձնաւորութիւն մըն էր, պէտք է այդ պակասութիւնը վերագրել, գոնէ մասամբ, իւր յաջողակութեան, որով գիտցաւ տեղի չտալ տաղնապեցուցիչ պատահարներու, և խոհական խորհրդով հեռացնել յուզիչ խնդիրներ։ Լատիններու հետ յարաբերութիւններ քիչ եղան իւր ատենը. և յայդմ իրեն համախոհ ունեցաւ Լևոն թագաւորն ալ։ Գրիգոր Ժ. պապը (1271—1276) որ Լուզդոնի Բ. ժողովով Յոյներու հետ միաբանութիւնը կը կարծէր վերջացնել, Հայերն ալ հրաւիրեց նոյն ժողովին (1274), այլ Յակոբ կաթողիկոս անպատասխանի թողուց հրաւէրը։ Յակոբի գործունէութեան նշանները կը տեսնուին այն եկեղեցական շինութեանց և եկեղեցական գիրքերու առատութեան մէջ, որք Լևոնի օրերուն պարծանքը կը կազմեն, որով թագաւորը հայրապետին խրատներուն և ուղղութեան հետևողն ու գործադիրը կը հանդիսանար։ Յարդ կը մնան ճոխ և հարուստ և չքնաղ գրչագիրներ, որոնց մէջ ոսկեգրութիւնն ու վայելչագրութիւնն ու նուրբ նկարն իրարու հետ կը մրցին, և որք ընդհանրապէս այդ թուականներուն կը պատկանեն։ Յակոբ եկեղեցական վարդապետութեանց և աւանդութեանց մէջ միշտ արիաբար և պարզաբար ուղղափառ հայ ուղղութեան հետևեցաւ, և

Լևոն թագաւորն ալ իրեն նպաստաւոր ունեցաւ, որ իւր իշխանութեան սկիզբէն հետի պահեց զինքն իւր հօր լատինասէր ուղղութենէն, և ողջամիտ և անվտանգ շաւղին հետևեցաւ։ Յակոբի մահը եղաւ փառքով (1286), որովհետև առանց մեծ յիշատակներու ալ, մեծամեծ գովեստներով պատուած կը տեսնենք նորա անունը ամեն պատմիչներէն հաւասարապէս։ Յակոբի ժամանակն ալ բազմաթիւ նշանաւոր վարդապետներ ծաղկեցան, յորս աւելի երևելիներն են Յովհաննէս Երզնկացի և Վահրամ պատմիչ։ Կը յիշուին նաև Ներսէս Մշեցի, Յովհաննէս Արճիշեցի, Մխիթար Սասունցի, Յովհաննէս Գանձակեցի, և Եսայի Նչեցի։ Վերջնոյս վրայ խօսելու առիթ պիտի ունենանք։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ. ՊՐՕՆԱԳՈՐԾ

138. Յակոբի յաջորդն է Կոստանդին Բ. որ սխալմամբ Կեսարիոյ եպիսկոպոս ենթադրուած է յոմանց, քանզի պարզապէս Խորին վանքի առաջնորդն էր, ինչպէս ճշտելով կը գրէ Օրբէլեան, որ ընարողական ժողովին ներկայ էր (Օրբ. Բ. 184), իսկ Սմբատ կը յիշէ զայն լոկ Պրօնագործ մականունով (Սմբ. 125)։ Ընտրութիւնը խնդիրներու տեղի տուաւ, վասն զի Լևոն Գ. Հեթումի որդին աւելի կուզէր կաթողիկոսացնել Անաւարզայ եպիսկոպոս Գրիգորը, որ յայտնի կուսակից էր լատինամիտ ուղղութեան, և Լևոն ալ Յակոբ կաթողիկոսի մահուանէ ետքն իւր միտքն և ուղղութիւնը փոխած կ'երևէր։ Եկեղեցականներ թագաւորին ընդդիմացան, և իրենց մէջ համարձակագոյն էր Ստեփանոս վարդապետ Օրբէլեան, Տարսայիճ իշխանի որդին, որ եպիսկոպոսական ձեռնադրութեան համար Սիս եկած էր, բայց Յակոբի մահուանէն ետքը հասած էր, և բուռն կերպով կը պաշտպանէր Արևելեայց ուղղութիւնը։ Վերջիններ զօրացան և Կոստանդին Խորինվանից առաջնորդ ընտրուեցաւ և օծուեցաւ (1286 ապրիլ 13) աւագ շաբաթ օր մեծապատիւ շքով և արքունական ճոխութեամբ, մեծաւ և աշխարհաժողով հանդիսիւ (Օրբ. Բ. 184)։ Իսկ միւս օր, որ զատիկ էր, ինքն ալ Սիւնեաց արքեպիսկոպոսութեան ձեռնադրեց և օծեց Օրբէլեան Ստեփանոսը, որ նոյն ինքն պատմագիրն է (Օրբ. Բ. 228), և ճիշտ գովութեամբ կը խօսի նոյն կաթողիկոսին վրայ, և կը հերքէ նորա դէմ զրուցուած ամբաստանութիւնները։ Կոստանդինի նախընթացին վրայ տեղեկութիւն չունիմք, նոյնպէս նորա երեքամեայ պաշտօնավարութեան վրայ բնաւ մանրամասնութիւններ չտար նոյն իսկ Օրբելեանը։

139. Հայրապետանոցի և արքունիքի յարաբերութիւնները չը խանգարուեցան մինչև Լևոնի Գ. մահը (1289). այլ Հեթում Բ. որ իւր հօրը յաջորդեց հակառակութիւններ շարժեց կաթողիկոսին դէմ, և մինչև զանիկայ գահընկեց ընելու հասաւ։ Այդ բանին գլխաւոր պատճառն էր Հեթումի լատինամոլ ուղղութիւնը հակառակ Կոստանդինի խոհական չափաւորութեան։ Հեթում թագաւորելէն անմիջապէս հաքը պապին դեսպան ղրկեց Յովհաննէս անուն լատին կրօնաւոր մը, որ յանուն թագաւորին հպատակութիւն յայտնէ պապին, ինչպէս որ գնաց, և պապին կողմէն դաւանական և բարեկարգական հրահանգներ առնելով դարձաւ։ Այդ պարագայն յիշուած է Հեթումի և Կոստանդինի հակառակութեան պատմութիւնէն առաջ, որով հակառակութեան սկզբնապատճառ եղած ըլլալը կը յայտնուի։ Իսկ գործին պաշտօնական և արտաքին ձևին համար կը պատմէ Օրբելեան, թէ երեսուն գլուխ զըրպարտութիւններ յօդեցին թագաւորն և համախոհ եկեղեցականներ կաթողիկոսին վրայ, թէ յառաջքան զպատարագն ըմպէ շարբաթ, թէ առնու հարկս ի լկտանոցաց և այլ նմանօրինակ սուտեր. և այս զրպարտութեանց վրայ գումարեցին ժողով ի Սիս մայրաքաղաք, և սուտ վկաներու ձեռօք զրպարտութիւնները հաստատելով գահընկեցութիւնը վճռեցին, ըսելով ի բաց հան ի քէն զկաթողիկոսութիւնդ և տուր ցմեզ։ Կոստանդին դիմադրութիւն չըրաւ, և բիւրապատիկ բան զոյն ունիմ ամբարեալ յոգիս, եւ չեմ արժանի այսմ աստիճանի ըսելով հրաժարեցաւ յօժարակամ։ Հայրապետական զարդերը վերջին անգամ մըն ալ զգենլով օրհնեց ամենքը, և եպիսկոպոսական զգեստն ալ հանելով մոգեղէն մը հագաւ, հայրապետանոցէն ելաւ և առանձնացաւ Գլխիբացի եկեղեցին։ Այլ հակառակորդներ կասկածելով, թէ մի գուցէ երթեալ ի վերին աշխարհն Արեւելից, եւ անդ ընկալեալ լիցի պատուով կաթողիկոսութեան, երկաթէ շղթաներով բանտարկեցին Լամբրոնի բերդը. և թէպէտ յետոյ շղթաները վերուցին, այլ մինչև չորս տարի բանտէն չը հանեցին։ Հակառակորդներուն վախը Կոստանդինի և Արևելեայներուն համախոհութիւնը կը հաստատեն, և յայտնապէս կը ցուցնեն թէ ինչ ոգւով գրգռեց Հեթում Բ. Կոստանդինի Բ. դէմ թշնամութիւնը, և թէ Կոստանդին զոհ գնաց իւր ազգային եկեղեցւոյն հաւատարմութեան։ Այդ գործողութիւնը տեղի ունեցաւ նոյնիսկ Հեթումի թագաւորութեան առաջին տարին (1289)։

Տ. ՍՏԵՓԱՆՈՍ Դ. ՀՌՈՄԿԼԱՅԵՑԻ

140. Հայրապետական աթոռին յաջորդութիւնը չուզեցին Հեթում և իւր համախոհներ իւրովի կատարել անմիջապէս, այլ Սկեւռացի Ստեփանոս վարդապետը նուիրակ ղրկեցին Արևելեայներուն որ գան և նոր ընտրութեան մասնակցին։ Արևելեայք չուզեցին մասնակցել ըսելով թէ գահընկեցութեան վճիռին ալ մասնակցած չէին, բայց զօրաւոր հակառակութեան դեր մըն ալ չստանձնեցին։ Ընտրութիւն կատարուեցաւ միւս տարին (1290) միայն Կիլիկեցիներու մասնակցութեամբ, և ի հարկէ դարձեալ խորհուրդ եղաւ Անաւարզեցի Գրիգորը բարձրացնել կաթողիկոսութեան, այլ Արևելեայներէն խիթալով ընտրեցին զՍտեփանոս ոմն անապատաւոր (Օրբ. Բ. 188), որուն համար կըսէ Օրբելեան թէ էր այր լաւ ե՛ւ լի ամենայն առաքինութեամբ, որչափ ալ ինքը ոգւով չափ ատելութիւն ունէր Կոստանդինի հակառակորդներուն դէմ։ Ասկէ կը հետևցնեմք թէ Ստեփանոս բարեմիտ մէկն էր, և Կոստանդինի դէմ դաւաճանութեան մասնակից չէր, այլ թէ դաւաճաններ վստահ էին իրը գործիք վարել զայն իրենց ուզածին համեմատ։ Ստեփանոս կը նշանակուի ծննդեամբ Եկեղեաց գաւառի Խախ գիւղէն, այլ բնակեալ ի Հռոմկլայ, և այդ պատճառով Հռոմկլայեցի կամ Հռոմայեցի կամ Կլայեցի կոչուած է պատմիչներէն։ Սրբակրօն անապատաւոր մը կոչուելէն ալ կը հետևցնենք թէ Սեաւլեռի վանքերէն մէկուն կրօնաւորներէն էր։ Աւելի տեղեկութիւն չեմք գտներ նորա վրայ, և ոչ ալ ուրիշ մանրամասթիւններ ունինք իւր երկամեայ պաշտօնավարութեան վրայ, որոյ ազետալի վերջը միայն հասուցած են մեզի պատմիչները։

141. Ստեփանոս իբր հլու գործիք կը ծառայէր Հեթումի և համախոհներուն, որոց գլուխ պէտք է ճանչնալ Անաւարզայ եպիսկոպոս Գրիգորը։ Իւր կաթողիկոսութեան երկրորդ տարին (1292) դարձեալ ծոռազատիկ էր, և Հայոց տոմարը կը թողուր զատիկը ապրիլի 13, մինչ Յոյներ և Լատիններ զայն պիտի տօնէին շաբաթ մը առաջ ապրիլի 6։ Ստեփանոս համակերպեցաւ Հեթումի և Գրիգորի հրահանգներուն և Սիս գալով զատիկը կատարեց ապրիլի 6, մինչ Արևելեայք և ուրիշ տեղերու Հայեր հաստատուն պահեցին ապրիլի 13 տօնելու հաշիւը։ Այլ կարծես թէ չարագուշակ եղաւ Ստեփանոսի ղեկավարութիւնը։ Հազիւ թէ Ստեփանոս Սիսէ Հռոմկլայ էր վերադարձած, որ Աշրաֆ սուլդան Եգիպտոսի, որ յաջորդած էր իւր հօր Ալփի սուլդանին (1290), յաղթական արշաւանքով Կիլիկիա մտաւ, Տրապոլիսը և Պաղոմայիսը գրաւելէ ետքը, և Հռոմկլայն պաշարեց, և ամիս մը

պատերազմելով նախ քաղաքը առաւ, յետոյ ներքնաբերդը, և ի վերջոյ բարձրագոյն միջնաբերդը, ուր էին կաթողիկէն և հայրապետանոցը։ Ստեփանոս կաթողիկոս գերի ինկաւ տասուերկու եպիսկոպոսներով և եկեղեցականներու բազմութեամբ, և թշնամիին ձեռքը ինկան եկեղեցական զանձեր և սուրբ մասունքներ, որոնց մէջ նաև Լուսաւորչի Ս. Աջը, հայրապետութեան նուիրական նշանակը։ Աւարի առնուած իրերուն մէջ էին նաև Ս. Լուսաւորչի գաւազանը և աթոռը և պատարագի սեղանը, և Ս. Հռիփսիմէի հողաթափն ու շղարշը ու պարեզօտը։ Ստեփանոս գերի տարուեցաւ բանակին հետ, Դամասկոսի հրապարակին վրայ իտես դրուեցաւ, և Եգիպտոսի մէջ երկաթի շղթաներով բանտարկուեցաւ, ուրև տարի մը մնալով բանտին մէջ վախճանեցաւ (1293), և Հաբաշի Ասորիներուն եկեղեցւոյն մէջ թաղուեցաւ եգիպտարնակ քրիստոնեայներուն ձեռքով։ Օրբէլեան սրտին ցաւէն բացագանչաբար կը խօսի Հեթումին. և Ստեփանոսի բանտարկութիւնը և սրբութեանց կորուստը կը վերագրէ Կոստանդինի անիրաւ պաշտօնանկութեան և բանտարկութեան և զրկման (Օրբ. Բ. 192), և նոյնիսկ Սմբատ կը դիտէ, կարծեմ թէ յանիրաւ իրաւանց եղեւ վասն Տէր Կոստանդեայ աքսորելոյն, զի այս ամենն վասն նախանձու եղեւ (Սմբ. 126)։

142. Ստեփանոսի գերութենէն ետքը, ինչպէս նաև նորա գերութենէն առաջ, հայրապետական գործերու վարիչը՝ Գրիգոր Անաւարզեցին էր, այնպէս որ Օրբելեան ծռազատիկին թուականը (1292) Անաւարզեցիին կաթողիկոսութեան երկրորդ տարին կը կարծէ (Օրբ. Բ. 193), թէպէտ և Հռոմկլայի առումին թուականը և Ստեփանոսի մահուան տարին ճշտելով Անաւարզեցիին ընտրութեան թուականը կ'իյնայ ծռազատկին յաջորդ տարին (1293), ինչպէս միաձայն կը վկայեն Սմբատ (Սմբ. 126) և Հեթում (Հեթ. 85). և նոյն ինքն Օրբելեան ալ (Օրբ. Բ. 193)։ Սակայն Անաւարզեցիին բուն կաթողիկոսութիւն կը սկսի Ստեփանոսի բանտի մէջ մեռնելէն ետքը։ Աշրաֆի աւար տարած սուրբ մասունքներուն համար Օրբելեան կ'ըսէ թէ կորեան անհետ եւ անգիր, եւ բնաւ ոչ երեւեցան (Օրբ. Բ. 192), սակայն Սմբատ կը վկայէ թէ Հեթում զնեաց զԱջն Լուսաւորչի եւ զամենայն մասունս (Սմբ. 126), և այս ազատումը կը հաստատուի ազգային աւանդութեամբ, որ ամենայն մտադրութեամբ կը հետեւի Ս. Աջին պատմութեան մինչև ցայսօր։ Թերևս տակաւին գնուած և ազատուած չէին մասունքները, կամ թէ լուրը Արևելք հասած չէր երբ Օրբելեան, գերութենէն անմիջապէս ետքը, բոցակէզ գրչովը կ'ողբար դժբաղդ արկածը։

Մ. Ա. Օ.

I

ԲԼԲՈՒԼ

Բաղի բլբուլ, շաղի բլբուլ,
Ինձ պէս խոցուած, սիրահար,
Բաղի միջին, շաղի միջին
Երգ ես կանչում անդադար։

Երգէ՛, բլբուլ, վէրքի բլբուլ,
Վարդդ գուցէ քեզ խղճայ.
Երգէ վէրքով, ծով արցունքով,
Վարդիդ սիրտը թող զղջայ...

II

*
* *

Թող ձօնեմ իմ սրտի ծաղկունքից նորաբոյս
Իմ ձեռքով պատրաստած մի փնջիկ-վարդ շուշան,
Թող ձօնեմ սեղանիդ—պաշտելի՛ մատաղ կոյս,
Սրբութեան վեհ տիպար, դիցունի երկնարժան։

Թող այնտեղ, սրբազան տաճարում քո խորունկ
Այդ փնջիկ յաւիտեան չթօշնի, թառամի.
Աւելի բուրաւէտ, քան նալուէ եւ կնդրուկ
Կը խնկէ քեզ, ո՛վ կոյս, պաշտման արժանի։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.

Ի՞ՆՉ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ *)

V

Հոգեբանական ուղղութիւն

Իւր խորութեամբ, ընդարձակութեամբ և բաղմապան ուսումնասիրութիւններով ամենից աչքի ընկնող ուղղութիւնը հասարակութիւնը հոգեբանական տեսակէտից ուսումնասիրող ուղղութիւնն է։ Վերջինս իր հերթին ունի բաւական խոշոր իրարից, ըստ էութեան, տարբերուող ստորաբաժանումներ, որոնք խնդրին մօտենում են միայն մի կողմից, աչքից բաց թողնելով միւս կողմերը։ Այս ստորաբաժանումները միմեանց դէմ չեն և իրար չեն հերքում, աւելի շուտ լրացնում և ամբողջացնում են։ Այն հանգամանքը, որ խնդրի ուսումնասիրութեան համար այս ուղղութեան մէջ առաջ են եկել բաւական խոշոր ստորաբաժանումներ ցոյց, է տալիս, որ հարցը մի ճանապարհով չի կարելի լուծել, այլ տարբեր ճանապարհներով, քանի որ հարցը ինքը բարդ է և բաղմակողմանի։

Այս ուղղութեան հետևողները ընդունում են, որ սոցիոլոգիան մի առանձին, անկախ գիտութիւն է, որը ուսումնասիրում է հասարակական կաղմը և հասարակութեան զարգացումը։ Առանց հասարակական օրէնքների չէր կարող սոցիոլոգիան իբրև ուրոյն գիտութիւն գոյութիւն ունենալ. եթէ հասարակական երևոյթների մէջ չեն իշխում օրէնքներ, եթէ հասարակութիւնը իւր զարգացման ընթացքում քմահաճոյքների է միայն ենթակայ, ապա սոցիոլոգիային աւելորդ կլինէր գիտութեան անունը տալ։ Կարևոր է շեշտել սակայն և այն, որ գիտութիւնը զբաղւում է ոչ թէ միշտ պարզը, ակնյայտնին որոնելով, հետախուզելով, այլ նաև ուշք է դարձնում հա-

*) Լումայ 1909 № 7—8

ւանականի վրայ. եթէ միայն ակնյայտնին, ճշդրիտը գիտութեան նիւթ լինէր, այն ժամանակ գիտութիւններից շատ շատերը, եթէ ոչ մեծագոյն մասը, սահմանափակ կլինէին իրենց գոյութեան վրայ խաչ քաշել: Ցաւանի է, որ ոչ մի գիտութիւն ընդհանրապէս առանց տեսութիւնների, ենթադրութիւնների գոյութիւն չունի. օրէնքները և հաւանական ենթադրութիւնները իրար կողքի առաջ են գնում և նպաստում են գիտութեան առաջ գնալուն: Այս հանգամանքը մեծ դեր է խաղում հոգեբանական ուղղութեան մէջ և նպաստում է աւելի ևս միահամուռ ջանքերով աշխատել ու սոցիոլոգիայի մէջ տեսութիւնները հաւանականութեան վերածելու, որ յետոյ էլ օրէնքներ կարողանան հանել:

Սոցիոլոգիան այս ուղղութեան համածայն իւր ուշքն է դարձնում ոչ միայն հասարակութեան կազմակերպութեան օրէնքների վրայ, այլ և աշխատում է ուսումնասիրել հասարակութեան զարգացման օրէնքները: Այս դէպքում դրութիւնը վերջինիս մէջ տեղի ունեցող երևոյթների հետ միասին շաղկապուած է ինկատի առնում. դրութիւնը չի բաժանւում նրա մէջ տեղի ունեցող երևոյթից, քանի որ դրութեան անհրաժեշտ մասն է կազմում երևոյթը. առանց երկուսի շաղկապման, միացման անհասկանալի կլինի ամբողջութիւնը: Գալով այն խնդրին, թէ ինչ է ինքը հասարակութիւնը, պէտք է նկատել, որ այս առթիւ տարբեր որոշումներ են արել. ամենից հաւանականն է իմ կարծիքով այն, որը բնորոշում է թէ հասարակութիւնը մարդկային անհատների միատեղ կեցութեան մի կազմակերպութիւն է, մասամբ դիտակցական: Ամբողջութիւնը այսպիսով ազդում է իւր մասերի վրայ, բայց ամբողջն էլ իւր հերթին մասերի ազդեցութեանն է ենթակայ: Հասարակութիւնը մի ոյժ է այս ուղղութեան համածայն, անհատականը ընդհանրացնող ոյժ. անհատական արտայայտութիւնները գաղափարները, մտքերը հասարակութիւնը տարածում է, ծաւալում և տալի հասարակական գոյն. այս դէպքում անհատականը գառնում է հասարակական: Միւս կողմից ի նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ հասարակութիւնը իրար մօտ դրած ան-

հատների մի գումար չէ, այլ նա այդ անհատների դէպի միմեանց և դէպի ամբողջութիւնը ունեցած յարաբերութիւնների մի բնաբաժան ամբողջութիւն է։ Այսպիսով ըստ այս ուղղութեան անհատական հոգեբանութեան կողքին գոյութիւն ունի նաև հասարակական հոգեբանութիւնը։ Հասարակական հոգեբանութիւնը իբրև առանձին ոյժ և տարբեր երևոյթ քան անհատականն է իւր հերթին ազդում է անհատականի վրայ։ Հասարակութիւնը այսպիսով մի կազմակերպութիւն է, որի մէջ տեղի ունին անհատական և հասարակական հոգեբանութեան երևոյթների ընդհարումներ և շաղկապումներ։ Այստեղից պարզ երևում է, որ անհատականը չի ժխտւում այս ուղղութեան մէջ, բայց և անհատին չի վերագրւում անպայման գերակշռող նշանակութիւն, այլ միայն ճանաչւում է նրա յարաբերական ոյժը հասարակական երևոյթներում։ Եթէ ըստ Սպէնսերի ասելու լինինք հասարակութիւնը մի վեր-օրգանական կազմակերպութիւն է, քանի որ կան օրգանական և ոչ օրգանական կազմակերպութիւններ։ Հոգեբանական ուղղութիւնը իբրև առաջնորդող թէզ ընդունում է այն, թէ, ըստ Շոպէնհաուրի ասած, իւրաքանչիւր նիւթ միայն անհատի գիտակցութեան ձևակերպումն է։ մտածողութիւնն է, որ ձևակերպում է այս կամ այն ձևով հասարակութեանը իբրև փաստ և նրա երևոյթները իբրև զարգացման ազդանշաններ։

Եղել են ուսումնականներ, որոնք աշխատել են հասարակութեան կազմութեան համար մի նախապատճառ, կամ մի սկզբնական սաղմ գտնել (օրինակ Լ. Գումպլովիչ) բայց այս խնդրի նկատմամբ աւելի բեղմնաւոր ու խելացի են թւում Մ. Կովալեվսկու առաջարկը «Սոցիոլոգիան մեծ օգուտ կստանար եթէ նա իւր անմիջական խնդիրներից հանէր այն հոգսը, որ պէտք է որոնել մի նախապատճառ և բաւականանար նրանով, որ համաձայն հասարակական երևոյթների բարդութեան ու բազմազանութեան, պէտք է ցոյց տալ միաժամանակ և զուգահեռաբար գործող պատճառների ազդեցութիւնը և հակազդեցութիւնը հասարակական կեանքում»[1])։ Այսպիսով հասարա-

[1]) Տես М. Ковалевскій; Соврем. Соціологія էր. XIV.

կական կազմը ոչ թէ մի նախապատճառի, մի գլխաւոր ոյժի արդիւնքն է համարւում, այլ շատ պատճառներից, որոնք կարող են միաժամանակ և լաւ և վատ ազդեցութիւն թողնել հասարակական կազմի և ընթացքի վրայ։ Այս պատճառներից ոմանք կարող են իրենց ազդեցութիւնը ուժեղացնել, տիրապետող հանդիսանալ և թուալ իբրև միակ ոյժ. սակայն ընդունել, որ այդ ժամանակաւոր գիտակցութիւն ստացած ոյժը նախապատճառ է և ընդմիշտ տիրապետող, կնշանակէ միակողմանի լինել և իրերի խորքը չթափանցել[2])։

Եթէ նոյնիսկ հնարաւոր լինի հասարակութիւնը վերլուծել, մասերի բաժանել, ինչպէս մի քիմիական մարմին վեր են ուծում, և հանել վերջը միայն մի տարրի, այդ դեռ չէր նշանակի, որ այդ տարրը ևս իր հերթին չի կարելի աւելի ևս տարրերի վերածել կամ բաժանել։ Եթէ այժմ այդ տարրը մենք չենք կարողանում բաղադրիչ մասերի վերլուծել, այդ մեր գիտական միջոցների և պատրաստութեան անկարողութեանը և անկատարելութեանը պիտի վերագրել. այս դէպքում ստիպւած քիմիայում դիմում են միայն մի հաւանական տեսութեանատոմի տեսութեան, որը իւր հերթին միայն մի ենթադրութիւն է և ոչ աւելի։ Հասարակական կեանքի շերտաւորումը հետզհետէ առաջ է բերում ոյժեր, որոնք այնքան էն տարբերւում իրենց ծնող ոյժից, որ անհնարին է լինում այլևս մի կապ գտնել երկուսի մէջ. բայց որ գլխաւորն է այդ նոր ոյժերը սկսում են անկախ գործել հասարակութեան մէջ։ Վերցրէք մեր ժամանակի բարդ կեանքը, ուր դեղարուեստը, գրականութիւնը, բարոյականութիւնը, իրաւունքը առանձին առանձին ոյժեր էն կազմում և շատ անգամ անկախ գործում էն. այս բոլորի համար մի նախապատճառ որոնելը, այս այլազան երևոյթներին մի սաղմից հանելը միայն զուր, աշխատանքի դուռն է բաց անում ուսումնականների առաջ։ Քանի որ հասարակական կազմը իր վերջին ելակէտում անհատական և հասարակական հոգեբանութեան դումարն, իսկ հոգեկան աշխարհը, ըստ Վունդի, չի ներկայացնում մի ինչ որ մշտական բան, այլ նա

---

[2]) Տես М. Ковал. Govp. Соціологи էր. 286

մի գործողութիւն է, որը միշտ ձևափոխւում է, ապա պարզ է, որ այդ մշտական ձևափոխութեան մէջ մենք գործ ենք ունենալու միշտ տարբեր երևոյթների, տարբեր պատճառների ու հետևանքների հետ։

Ինչպէս ասացինք սոցիոլոգիայի խնդիրն է, ոչ միայն հասարակական կազմն ուսումնասիրել, այլ նաև այդ կազմի զարգացման օրէնքները կամ հաւանական ենթադրութիւնները ուսումնասիրել։ Այժմ դիմենք վերջին խնդրին, թէ ինչպէս է հասկանում հոգեբանական ուղղութիւնը հասարակական կազմի զարգացումը և անհատի դերը այս զարգացման մէջ ինչ տեղ է բռնում և ինչպէս։ Շնորհիւ ժողովրդագրութեան և մարդաբանութեան սոցիոլոգիան հնարաւորութիւն է ստացել բազմաթիւ նախապատմական, վայրենի ապա և կուլտուրական ու պատմական հասարակական ձևերը համեմատել և տեսնել, որ հասարակութիւնը ժամանակի ընթացքում զարգանում է։ Զարգացման փաստը ակներև է, հարկաւոր է այս փաստը հասկանալ և բացատրել։ Նախ նկատենք, որ զարգացում և յառաջադիմութիւնը հասարակութեան և օրգանիզմի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնների հոգեբանական ու բարոյական տեսակէտից քննուած սուբիեկտիվ հասկացողութիւն է միայն։ Մարդկային հասարակութեան մէջ նկատելի է մի զարգացում, որը նրան տալիս է նոր միջոցներ գոյութեան կռիւ մղելու, ոչ իւր մերձաւորների և իւր նմանների դէմ, այլ շրջապատող բնութեան դէմ։ այդ զարգացումը մարդուն տալիս է հոգեկան նոր ոյժեր չմաքառելու իւր մերձաւորի դէմ, իսկ հասարակական կազմին տալիս է այնպիսի կազմակերպութիւն, որով այդ կռիւը մերձաւորի, ընկերի դէմ ըստ ինքեան աւելորդ և անհասկանալի է դառնում[1]։ Զարգացման հնարաւորութիւնը առաջ է գալիս միայն այն ժամանակ, երբ դիտակցական գործունէութիւնը դերակշռող դեր է ձեռք բերում անդիտակցականի վերաբերմամբ[2]։ Այս դէպքում առաջ է գալի դիտակցականի և անդիտակցականի ընդհարումն և միայն այդ պայ-

---

[1]) Տես Карѣевъ Введ. в. изуч. Соц. 286 եր.

[2]) Տես М. Ковал. Совр. Соціологи եր. 428.

քարից յետոյ տեղի է ունենում յառաջադիմութիւն։ Քանի որ իդէան, իբրև այդպիսին, իբրև գիտակցութեան արտայայտութիւն ըստ ինքեան իւր հանդէս գալովը մի գործողութեան սկիզբն է դնում, հասկանալի է ուրեմն, որ իդէաների փոփոխութիւնը կեանքի մէջ փոփոխութիւններ է առաջ բերում և միւս կողմից կեանքի փոփոխութիւնն էլ իւր հերթին առաջ է բերում նոր իդէաներ։

Հասարակութեան զարգացման մէջ մենք տեսնում ենք անհատի հետզհետէ աղատագրուելը հասարակութեան ամբողջութիւնից հոգեպէս. հասարակական կազմի ամբողջ ոյժը թուլանում է անհատի հոգեկան աշխարհի վրայ, մեծ ազդեցութիւն թողնելուց. այս դէպքում ծգտման առարկայ դառնում է աղատ ցանկութեամբ համախմբուած ու կազմակերպուած մարդկային հասարակութիւնը։ Աւելորդ է ասելն անգամ, որ սոցիօլական խնդիրը վերջնականօրէն վճռել, տալ մի վախճանների վախճանը արտայայտող բացատրութիւն անհնարին է. այդ կնշանակէր կեանքի գոյութիւնը կանգնեցնել, մինչդեռ քանի կեանքը կայ, որը մի ոյժ է, նա դիմադրութեան պիտի հանդիպի, այլապէս նա ոյժ չի լինի, իսկ դիմադրութիւնը ծրդման, պայքարի ազդանշանն է։

Ցիշենք կողմնակի, որ ժամանակակից սոցիալիստական ուղղութիւնը այս տեսակէտից մի տեսակ մեղանչում է գիտութեան ու ճշմարտութեան դէմ, կարծելով որ մարդկանց բաղդաւորութիւնը վերջնականապէս սոցիալիզմի իրականացումով տեղի կունենայ և որ այդ իրականացումը սոցիալիզմի արդարացի և ճշմարիտ լինելը կապացուցանի։ Հարկաւոր է յիշել, որ մարդկութիւնը միշտ ունեցել է և կունենայ իւր «ոսկէ դարի» իդէալը և որ սոցիալիստական հասարակութիւնն էլ կունենայ իւր «ոսկէ դարի» աւանդը. սոցիալիզմն էլ մարդկային հասարակութեան զարգացման ընթացքում մի էտապ է։ Եթէ սոցիալիզմն իրականանայ էլ զանազան ձևափոխութիւններ, յաւելումներ ու յապաւումներ կրելուց յետոյ, այդ դեռ չի նշանակի, որ նա իրաւացի և արդար էր. քանի որ իրողութիւնը, իրականանալը և ճշմարտութիւնը հաւասարազօր դաղա-

փարներ չեն։ Շատ երևոյթներ են եղել կեանքում, այդ դեռ չի նշանակում ի հարկէ թէ դրանք ճշմարտութեան արդիւնքներն են։

Ինչպէս ասացինք, հասարակական զարգացման մէջ նկատելի է անհատի հետզհետէ անջատումը կամ ազատագրումն հասարակական ոյժից. անհատը իր ամբողջութիւնը աւելի է մեծացնում։ Աշխատանքը անհատի օրգանների մէջ աւելի է մեծանում իսկ անհատների իրենց մէջ պակասում է (Михайловскій). Ի հարկէ անհատը հասարակութեան բաղադրիչ մասն է, բայց նա ըստ ինքեան մի հոգեկան միութիւն է։ Անհատը բնորոշելիս մենք չենք արձանագրում միայն նրա զոյութեան փաստը, այլև տալիս ենք նրան որևէ գնահատութիւն. մինչդեռ օրգանիզմը բնորոշելու դէպքում մենք միայն արձանագրում ենք փաստը, առանց որևէ արժէքաւորման։ Պարզ է, որ անհատին և օրգանիզմին ոչ մի դէպքում նոյնացնել չի կարելի։ Որքան և հասարակութիւնն ու անհատը միմեանց հետ անմիջական յարաբերութեան մէջ են գտնւում, միմեանց լրացնում և պայմանաւորում են, այնուամենայնիւ անհատը ունի իր որոշ ազատութիւնը, որով նա հնարաւորութիւն է ստանում միջավայրի արդիւնք լինելով հանդերձ, իւր հերթին աղդել այդ միջավայրի վրայ, որոշ դէպքերում անկախ դեր խաղալ շնորհիւ իւր ունակութիւնների։ Թէ ի՞նչ է նշանակում անհատի ազատութիւնը, մասամբ կարելի է մատնանիշ անել պատմական անցեալը, երբ յիրաւի անհատը մեծ չափերով էր կլանուած հասարակութիւնից և մի տեսակ զուրկ էր ինքնուրոյնութիւնից։ Յիշենք մեր ներկան, երբ անհատը ինքնագիտակցութեան շնորհիւ կարողացել է բաւականաչափ ազատագրել իրեն թէ հասարակութիւնից և թէ մասամբ բնութիւնից։

Ոչ ոք չի կարող ժխտել, որ մեր մէջ զոյութիւն ունի «Ես»-ի գիտակցութիւնը. մի գիտակցութիւն, որով իւրաքանչիւր անհատ զգում է և համոզւում, որ ինքը տարբեր է մնացած բոլորից, որով նա գիտակցում է թէ ինքը մի ամբողջութիւն է, մի ինքնուրոյնութիւն, որի նմանը չկայ և չի եղել։ Այդ «Ես»-ի գիտակցութիւնը մի ապացոյց է անհատի ազա-

տութեան և պատասխանատուութեան գիտակցութեան։ Այն հանգամանքը, որ մենք մեզ պատասխանատու ենք ճանաչում մեր գործերի համար, որ մենք գիտակցում ենք մեր որևէ արարքի մերը լինելը, մեզանից դուրս գալը, արդէն իսկ ազատութեան ապացոյց է։ Լինելով միջավայրի ազդեցութեան տակ և որոշ չափով նրա ծնունդը, մենք այնուամենայնիւ գիտակցում ենք, որ մեր «ես»-ը այլ բան է քան շրջապատը, որ մեր «ես»-ի տակ մենք հասկանում ենք տարբեր երևոյթներ, քան շրջապատն է. չլինէր այդ ազատութիւնը հասարակութիւնը չէր ունենայ անհատներ, այլ միայն մի զանգուած ըստ ամենայնի իրար նման օրգանիզմների։ Բարոյական օրէնքների գիտակցութիւնը, երկրի և երևոյթների գնահատումն, արժէքաւորումն նոյնպէս ապացոյցներ են, որ մենք ունենք գործելու որոշ ազատութիւն, որ մենք միայն մի մեքենայ չենք, այլ որոշ դէպքերում նաև ստեղծագործողներ ենք։

Անհատի ազատութեան մասին խօսելիս չպէտք է մոռանանք, որ ազատութիւն ասելով մենք չենք հասկանում երևոյթների առանց պատճառների առաջ գալու մի հնարաւորութիւն։ Առանց պատճառների երևոյթներ չկան, այս ներկայումս մի աւելի քան տարածուած և ծամծմուած հասկացողութիւն է։ Եթէ սոցիոլոգիան չընդունէր պատճառականութեան օրէնքը, նա իրրև գիտութիւն գոյութիւն չէր կարող ունենալ, որովհետև ուր, այսպէս ասած, կամայականութիւնն է իշխում, այնտեղ օրէնքներ փնտրելը կամ ընդհանրացումներ, տեսութիւններ կազմելը անմտութիւն կլինէր, իսկ առանց վերջիններիս մի որևէ գիտութիւն անհասկանալի է։ Ազատութիւնը այս դէպքում պէտք է հասկանալ այս ձևով։ Վունդն ասում է, որ առհասարակ հոգեկան կեանքի էութիւնը կամքն է. նա ընդունում է, որ գիտակցութիւնը ու կամքը միմեանցից անբաժան են. մէկի զարգացմանը զուգահեռական գնում է և միւսին. ենթադրել գիտակցութիւն առանց կամքի անհնար է։ Սակայն կամքը հոգեկան կեանքում գերակշռող դեր է խաղում, ընթացք է տալի հոգեկան երևոյթներին։ Անհատի համար այսպիսով գերակշռող նշանակութիւն ունի կամքը։ Վունդը ընդու-

նում է կամքի ազատութիւնը. ազատութիւնը, ասում է նա, և մի որևէ էակի ընդունակութիւնը մտածուած ընտրութեամբ զանազան պատճառների մէջ իւր գործելակերպը որոշել, ուրիշ խօսքով, կամքի ազատութիւնը ոչ թէ կամքի սանձարձակութիւն է նշանակում կամ կամայականութիւնը, այլ որ եղած պատճառների մէջ, դրդիչ մոտիվների մէջ նա ընդունակ է ընտրութիւն անել, հեռևել սրան կամ նրան, դերակշռութիւն տալ սրան և ոչ նրան, հեռևել այս գործելակերպին և ոչ այն: Այսպիսով պատճառականութիւնը մնում է իւր տեղը, միայն նա անխուսափելիութեան արժէք չունի. կամքը հնարաւորութիւն ունի ընտրութիւն անելու նրանց մէջ: Այսպիսով յանձին Վունդի տուած կամքի ազատութեան բացատրութեան ստանում ենք անհատի ազատութիւնը հասարակական խնդիրներում. անհատը մեքենայի դերից դուրս է գալիս և մտնում է մեքենագործի դերի մէջ: Այս տեսակէտից է, որ հասկանալի է դառնում անհատի և հասարակութեան, իրրև ուրոյն ոյժերի, յարաբերութիւնները և միմեանց փոխադարձաբար լրացնելը:

Հասարակութիւնը ինքը ոչ թէ տրամաբանական մտածողութեան արդիւնք է, այլ կամքի դերկայութիւն, ուրեմն որոշ չափով հասարակութիւնը ինքը ևս ազատ է իւր գործելակերպի մէջ: Հասարակութիւնը իւր վեր-օրգանական հոգեբանութեան շնորհիւ է հասկանալի և քննութեան առարկայ. անհատական և հասարակական հոգեբանութիւնների ընդհարումները ու հաշտութիւնները կազմում են հասարակական կեանքի զարգացման ուղին: Սոցիոլոգիան այս տէսակէտից դառնում է մի փիլիսոփայական գիտակարգ. նա տալիս է սոցիալական երևոյթների տեսութիւնը:

Եզրափակելով բոլոր վերոյիշեալ դատողութիւնները պէտք է ասենք, որ հասարակութեան գաղափարը մի հաւաքական գաղափար է, որ այս գաղափարը ճշգրիտ որոշել, կամ բացարձակ մի որոշում տալ անկարելի է: Հասարակութեան զարգացման ուղին դնել ընդհանուր հրամայողական օրէնքների տակ, օրէնքներ, որոնք միակողմանի և կիսատ են, կնշանակէ

սկսող մտածելակերպ ունենալ։ Նոյնքան թիւր հասկացողութիւն է անհասի խաղացած ուրոյն դերը չգնահատել այդ զարգացման մէջ։ Այս բոլորը ցոյց են տալի, որ հոգեբանական ուղղութիւնը իւր տուած բացատրութիւնների մէջ հեռու է դոգմատիկ ուղղութիւնից և խորն ու բազմակողմանի է ընդգրկում երևոյթները քան միւս ուղղութիւնները։ Անշուշտ այս ուղղութիւնն էլ դեռ շատ խնդիրներ մութ է թողել և կան հարցեր, որոնց համար բաւարար բացատրութիւններ չի տուել դեռ, բայց այն՝ որ դիտութիւնն է, որ չունի դեռ չլուծուած պրոբլէմներ, դեռ ստիպուած չէ նորանոր տեսութիւններ տալ և աւելի հաւանական բացատրութիւնների դիմել։ Խնդիրը ուրեմն ոչ թէ այս դէպքում առաջարկուած հարցի ըստ ամենայնի պարզաբանելն է, այլ այդ հարցի համար ընտրուած եղանակը, մեթոդը. այս տեսակէտից հոգեբանական ուղղութիւնը յիրաւի հարցը աւելի է պարզաբանում և աւելի ուղիղ միջոցներ է առաջարկում յետագայ ուսումնասիրութիւնների համար։

Զգիտեմ որքան է ինձ յաջողուել միանգամից գաղափար տալ այս գրուածքում հասարակութեան ի՞նչ լինելու և ի՞նչպէս զարգանալու մասին. իրրև առաջին փորձ անշուշտ շատ թերութիւններ կլինեն մէջը, սակայն թւում է, որ ընթերցողը առնուազն մի գաղափար միշտ շեշտուած պիտի տեսնի, այն որ հասարակութիւնը ըստ ինքեան մի դիւրըմբռնելի երևոյթ չէ, յանուն որի կամ ընդդէմ որի կարելի լինի դուրս գալ և գործել, որ հասարակութեան ինչ լինելը հասկանալու համար հարկաւոր է երկար աշխատանք, ուսումնասիրութիւն և համոզմունք։ առանց վերջինիս հասարակութեան մէջ յանուն հասարակութեան գործողը առնուազն անբարեխիղճ է, եթէ ոչ աւելին։

Ով համոզուած չէ գործում, ով գիտակցաբար չէ մօտենում հասարակութեանը, աւելի շուտ նա վնասակար է, քան օգտակար հասարակութեանը։

Pessimist

ՔՕՍԱ-ԴԱՂ ԼԵՐԱՆ ՎԿԱՆ*)

IX

Գիշերը մերձենում էր վախճանին։ Տեղ-տեղ մեռելային լռութիւնը ընդհատւում էր այս ու այն արենռուշտ գազանների ոռնոցով, որոնք ասես բողոքում էին Նախախնամութեանը, որը այդպէս կանուխ վերջ է տալիս խաւարի իշխանութեանը։

Մերթ-մերթ վերջալուսինը հալճիպ քայլերով մթնաշաղ թուղպերի տակից իր խամրած երեսն էր ցոյց տալիս Զագ գիւղի բարձրագագաթ լեռներին, որոնք գիշերային խաւարի մէջ մի ահարեկող սարսուռ էին առաջ բերում շրջակայքում և ահ ու դող տարածում իւրաքանչիւր արարածի վրայ։ Դեռ երեկ նրանք ականատես էին եղել իրանց խուլ ու մութ ձորերով անցնող թշուառների մի ստուար բազմութեան, որոնք եղկելիութեան հետքերն էին թողել նրանց ապառաժ կրծքի վրայ։ Կարծես այդ վշտախորով զաւակների տեսքը և անհուն անմխիթար դրութիւնը խորն էր ազդել նրանց սրտի վրայ. նրանց պատկերը այդ գիշերը մի արտասովոր մռայլ կերպարանք էր ստացել և զգալի կրում էր իր վրայ սևագոյն թախծի և տրտմութեան կնիքը։ Գիշերուայ այդ պահուն Զագ գիւղի սահմանը տանող ճանապարհի վրայ երկու հակառակ ծայրերից երկչոտ քայլերով ընթանում էին երկու հոգի, որոնք հեռուից գիշերային ուրուականների էին նմանանալով։ Նրանցից մէկը գալիս էր դէպի գիւղը, իսկ միւսը դէպի սահմանն էր աճապարում։ Վերջինը անցաւ գիւղի դաշտի միջի աղբիւրի մօտով, մի վշտալից հայեացք գցեց դէպի այն կողմ, ուր ջուրը անընդհատ վըխկ ու բըխկ անելով վիժում էր երկրի խորքերից։ Թշուառ ճանապարհորդը խոր հոգոց հանեց, ապա շարունակեց իր ճանապարհը։ Աղբիւրի անընդհատ տնքոցը յիշեցրեց նրան շատ բան։ Նա յիշեց թէ՝ ինչպէս այդ աղբիւրի կողքին ինքը քանի-քանի տարիներ հանդիստ է գտել և վարդագոյն յոյսերով դէպ իր ապագան շարժուել. յիշեց թէ՝ ինչպէս ինքը վերջին անգամ ընկերների հետ վերադառնում էր սահմանից և պատրաստ-

*) «Լուսայ» 1909 № 7—8

ւում իր ներկայութեամբ բաղդաւորացնել Սօնային... Բայց այժմ ամեն ինչ կորած էր նրա համար, կորած էր անդառնալի և ինքը գլուխ դնելու տեղ չունէր անգամ։ Իր ծննդավայրը, հայրենի օջախը հալածում էր նրան և աստանդական գաւազանն իրան բաժին էր մնացել։

Ճանապարհորդը Վահէն էր, որը վերադառնում էր Ջազդիւղից։

Մինչ սրտամաշ խոհերը գալիս էին ու անցնում նրա գըլխով, մօտեցաւ միւս ճանապարհորդը, որի մռայլ երեսը, գըզգղուած մազերը, անհաւասար քայլերը և ստէպ-ստէպ ցնցումները մարմնի զանազան մասերում խելագարի էին նմանեցնում նրան։

Վահէն նայեց նրան և մնաց զարմացած. մօտով անցնում էր Վռամը։ Վերջինս էլ տեսաւ Վահէին և սովորականից աւելի արագացրեց քայլերը։ Վահէն, տեսնելով այս յանկարծական փոփոխութիւնը, դուրս եկաւ ճանապարհից և քայլերը ուղղեց դէպի Գ. գիւղի հսկայ լեռները։ Զանցաւ երկար ժամանակ, Վահէի ականջին պարզ զարնուեցին հարայ-հրոցի ձայներ։ Նա նայեց Գ... գիւղի ճանապարհին։ Այնտեղ զինուած մարդկանց ստուար խումբը դէպի առաջ էր վազում։ Այդ խառնաշփոթութեան մէջ նա ճանաչեց Վռամի ձայնը, որը պնդում էր թէ՝ «ինքս տեսայ այդ աւազակ Վահէին աղբիւրի մօտին, տեսայ և վազ տուեցի ձեզ յայտնելու. բայց ինչ եղաւ, ուր ծլկուեց՝ սատանան էլ չի իմանում»։ Վահէն հասկացաւ, որ իրան են հալածում, հասկացաւ, որ Վռամն էր նրանց ոտքի հանել և կորաւ լեռների խոռոչներում։ Երկար փնտռելուց յետոյ Վռամը վերադարձաւ իր մարդկանց հետ գիւղը, նզովելով չար բաղդը, որ չը կարողացաւ բռնել այդ աւազակին։ Գիւղում Վռամը վճռեց մի առժամանակ հանգստանալ և հսկել Ալաշկերտցոց տունը, լիայոյս լինելով, որ Վահէն դարձեալ այցելութեան կը գայ իր մօրը։ Այսպէս անցկացաւ մի քանի ամիս։ Գաղթականները, որոնք այդ գիւղումն էին ապաստան գտել, համոզուեցին, որ աւելի բարւոք է հեռու կենալ Վռամից։ Սակայն թշուառները շուտով ենթակայ եղան զանազան հիւանդութիւնների։ Աւելի երջանիկ էին նրանք, որոնք քաղաքներումն էին ապաստանել. այստեղ զանազան բարեսիրտ մարդիկ կարելոյն չափ հոգս էին տանում ամոքելու նրանց վէրքերը և կարեկից լինել նրանց վշտերին։ Զանքիր չէին խնայում և բժիշկները, ձրիապէս բժշկութիւն էին անում, առողջապահիկ խորհուրդներ տալիս նրանց և մեղմում նրանց տառապանքները։

Այսպէս չէր գիւղում։ Այստեղ նրանք ամեն բան իրանց ճակատի քրտինքով էին ճարում։ Թէև սկզբներում հայ գիւղացին բաց արեց նրանց առաջ իր առատ սփռոցը, սակայն հետզհետէ իրերը իրանց սովորական դերի մէջ մտան և գիւղական այդ սփռոցը փակեց իր ծայրերը նրանց առաջ։ Այստեղ աւելի սուր կերպարանք ստացան նրանց մէջ բուն դրած այլ և այլ հիւանդութիւնները. սակայն անհրաժեշտ բժշկական օգնութիւն և ոչ մի կողմից, այստեղ չը կային բժիշկներ, այլ նրանց դերը կատարում էին գիւղական գրբացները, որոնց հասցրած վնասը անհերքելի է։

Զաղ գիւղի փախստականներն էլ ազատ չը մնացին այս ցաւալի վիճակից. նրանց մէջն էլ երևան եկան հիւանդութեան դէպքեր։ Բայց ամենից վտանգաւոր էր մի այրի կնոջ 13 տարեկան որդու հիւանդութիւնը։ Թշուառ կինը ականատես էր եղել բրդերի գաղանութիւններին, իսկ այժմ ճակատագիրը դարձեալ հարածում էր նրան. նրա թառլան զաւակը մերձ փ մահ հիւանդ էր ինչ անէր. ում դիմէր։ Պառաւներին նա շատ էր փորձել, շատ էր նրանց այս ու այն տգէտ պատուէրները կատարել և վերջը այն եզրակացութեան եկել, որ նրանցից իրան և իր որդուն օգուտ չը կայ։ Այժմ յանկարծ լսում է, որ գիւղում մի բանիմաց մարդ կայ, այն էլ հայ, այն էլ քահանայի որդի. բայց երբ իմանում է, որ այդ մարդը Վռամն է, մնում է շուարած և յուսախաբ. նա դեռ Տրիից գիտէր նրա ով լինելը։ Սակայն թողնել որդուն կիսամեռ դրութեան՝ անկարող էր. նրա մայրական քնքոյշ սիրտը այլևս ընդունակ չէր տանել որդու ծանր հառաչանքը։ Պէտք էր մի բան անել։ Դիմել Վռամին՝ կը նշանակէր ընկնել նրա ցանցը, թողնել որդուն այդ դրութեան մէջ՝ նրա զգացմունքներից բարձր էր։ Երկար, շատ երկար նրա մէջ կռուում էին այդ երկու նուիրական զգացմունքները՝ հաւատի և որդու սէրը։ Որին տալ առաւելութիւն, որին ուրանալ. երկուսն էլ հաւասարաչափ անփոխարինելի էին նրա համար։ Այս կռուի մէջ, նա իր շուրջը մոռացութեան տուած՝ ընկղմուել էր յոյզերի տարտարոսը և ոչ մի ելք չէր գտնում։ Ամեն ինչ մութ ու խաւար էր. մտքերի խռովայոյզ ծփումը փակել էր նրա ուղին դէպի փրկութեան դռները։ Մինչ վճռում էր առաջինին տալ առաւելութիւն, որդին իր դալկացած, մաշուած դէմքով ցցւում էր նրա առաջ և նրա մայրական սիրտը տակն ու վրայ անում։ Նա սիրող մայր էր։ Դառնում էր դէպի վերջինը, հայրենիքի սրբազան վայրերը։ Հայ եկեղեցին վայրկենաբար իր շուք ու զարդով կանգնում էր նրա առաջ։ Նա այդ եկեղեցու հաւատարիմ զաւակն

էր և անհուն հաւատով հաւատացողը...

Խռոռ... որդու խեղդուելու ձայնը ուշքի բերեց թշուառ մօրը։ Մի ցնցում անցաւ նրա մարմնով. նա ամեն ինչ մոռացաւ. մի դառնագին ճիչ արձակեց ու շանթահար առիւծի նման դուրս թռաւ տանից ու կորաւ գիշերային խաւարի մէջ։ Մի քանի րոպէ, ահա նա Վռամենց դռանն է կանգնած։ «Թրրխկ-թրրխկ-թրրխկ...» լսեց ներքևից դռան թակելու ձայնը գրասեղանի առաջին բազմած Վռամը։ Մօտեցաւ լուսամուտին, բաց արեց և զայրոյթով գոռաց.

—Ո՞վ էք։

—Ես եմ, մի անտէր գաղթական կնիկ... լսուեց դրսից անբաղդ կնոջ խուլ ձայնը։ «Գաղթական», մռմռաց Վռամը հազիւ լսելի ձայնով, ապա հարցրեց.—Ի՞նչ կայ գիշերուայ այս պահուն. ի՞նչ խօսելիք ունիս ինձ հետ։

—Խղճա՛ ընձի, պ. Վռամ, մինուճար որդիս մերձ ի մահ հիւանդ ա, մեռնում ա...

—Ի՞նչ անեմ մեռնում է, թող մեռնի, ես կարող եմ Աստուծոյ ձեռքը բռնել,—ընդհատեց նրան բժիշկը։

—Զըս կրնա, համ դու քո իգալով կռնաս դռեվա շատ բան ընել, ապատել ընտոր մահուան դրկից։

—Իմ այցելութիւնո՞վ,—փընթփընթաց Վռամը, հա՛, իմ այցելութեան նշանակութիւն նոր էք տալիս հա՛. չէ՞ որ ես ինքս եկայ ձեր առաջ, քարոզեցի, որ հէնց ձեր օգտի համար լսէք ինձ, բայց դուք կատարեցի՞ք։

—Ախը ի՞նչ լսէինք. որի՞ս գլխին էն ժամանակ խելք կէր։

—Որ լսէիք, համ փող կունենայիք, համ ուրիշ լաւ-լաւ բաներ։

—Դէ՛հ, յընցել ա, պ. Վռամ, խղճա՛, գնանք. տղիս կուշտ մարդ չը կայ, մենք յետըցանք։

—Ես հեքմութեամբ չեմ պարապում, և այս պահուն տանից դուրս գալ չը գիտեմ։ Բայց, որ շատ ես աղաչում, կը գամ, միայն պիտի լսես ինձ՝ հէնց քո և տղայիդ օգտի համար ընդունէք մեր հաւատը, որը ձերից այնքան էլ տարբեր չէ,—ժպտալով վերջացրեց բժիշկը։

—Ա՜խ... սթափուեց թշուառ կինը,—էս ժամին ու էդպիսի առաջարկութիւն, պ. Վռամ, մեղք ա քու հոգու համար։

—Դէ՛հ, որ չես լսում, կորի՛ր, թող ես հանգիստ մնամ, հեռացի՛ր, քեզ ասում եմ։

—Մի վերև իշկայ, պ. Վռամ, էնտեղ Մէկը կայ, որ ամեն բան կը տեսնա, թողէք ամեն էդ առաջարկութիւններ և եկէք գոնէ ձեր Աստուծոյ խաթեր համար։

—Լռիր և հեռացիր, ես հայ եմ. ես քեզ ասում եմ տարբերութիւն չը կայ այդ հաւատների մէջ և հիմի հանգամանքները պահանջում են և ժամանակ էլ է թողնել ձեր հաւատը։

—Իմ լոյս հաւատը իմ որդուց բարձր ա, քեաֆուր անաստուած, թող էն էլ մեռնի շատերի հետ, միայն թէ ես չեմ խախտի հայրենի երկրին, հայրենի եկեղեցուն տուած ուխտս, ամօթ քզի, քարասիրտ մարդ, ապառաժ է քո սիրտը։

—Սուսս... ճչաց Վռամը և դարձաւ դէպի ծառայի դուռը,— Մուքօ, խրկիր էդ վայրահաչին, մեր քնելու ժամանակն է։

—Տէր, դու կը տեսնաս,—մրմնջաց խեղճուկ կինը և, թքելով նրա դռան ճակատին, շշմածի նման արտասուք թափելով վերադարձաւ տուն, ուր որդին վաղուց էր փակել իր աչքերը։

Որպիսի՜ տարբերութիւն, ընթերցող, Վահէի և Վռամի մէջ։ Դրականապէս փոխում է, արդեօք, կրթութիւնը մարդու ներքին աշխարհը, և եթէ հա, ինչո՞վ բացատրել այդ սարի պէս հակասութիւնը։ Մէկը ամեն ինչ թողած՝ նուիրուել է թշուառների, հայրենիքի կարիքներին, իսկ միւսը դրա կատարեալ հակապատկերն է կազմում։

X

Ձաղ գիւղի եկեղեցու զանգակները զօղանջիւնով տարածում էին ամեն տեղ իրանց մելամաղձոտ ձայնը։ Եկեղեցու մէջ մի լռելեայն իրարանցում անցաւ՝ ամեն մէկը պատրաստւում էր դուրս գալ, որովհետև պատարագը մերձենում էր վախճանին։ Պատարագիչ քահանան վայր իջաւ սեղանից և դիմեց դէպի նընջեցեալի դագաղը, որը համեստ արտաքինով աչքի էր ընկնում այդ սրբավայրի արդ ու զարդի մէջ։ Անհրաժեշտ մաղթանքների և աղօթքների ընթերցումից յետոյ, սկսուեց յուղարկաւորութեան հանդէսը։ Գիւղական համայնքին յատուկ ողբ ու կսկծի, լաց ու հառաչանքի ձայներ չէին լսւում։ Միայն խղճուկ Եղիսն էր նընջեցեալի գլխի վերևը իր որդու հետ կանգնած և լուռ ու մունջ թափում էր արտասուքի կաթիլներ, որոնք շատերի նման նոյն իսկ աննշմարելի էին մնում և նրա շրթունքների դողդոջուն շարժումները, երբ նա անհուն գոհունակութիւն էր մրմնջում Վերին-Նախախնամութեանը, որ քրոջը արժանացրել է պատարագի հանդիսաւոր թաղմանը։ Դարերի ընթացքում մի սրբագործուած աւանդ է անցել սերնդէ սերունդ, այն է՝ ճիգեր թափել խափանելու այն ամեն խոչնդոտները, որոնք կարող են տեղի ունենալ թաղման ժամանակը, և ննջեցեալին արժանացնել ժամ ու պատարագի հրաշալորդ զօրութեանը։ Մոռանալ դարաւոր աւանդը

քարձր է իւրաքանչիւր հայի էութիւնից։ Ոչ մի ժամանակ բաղ-ժութիւնը այնպէս չէ խռնւում եկեղեցում, ինչպէս պատարագի արարողութեան ժամանակ։ Ոչ մի ծիսակատարութիւն այնքան հոգեկան հրճուանք, սէր ու սփոփանք չէ առաջ բերում հայ-մարդու ներքին աշխարհում, որքան պատարագի գերագոյն խորհուրդ-ները։ Ո՜րքան խորագոյն արմատներ է գցում մարդու սրտում, ջղաձգական ցնցումներ առաջացնում նրա հոգեկան աշխարհում եկեղեցու բեմից լսուած իւրաքանչիւր խորհրդի վեհապանծ ձայնը «ի յարկի քում սրբութեան...» կամ նրա մելամաղձոտ մե-ղեդիների թախծալի ելևէջները, որոնք արցունքների հեղեղներ են քամում նոյնիսկ քարասիրտների աչքերից։ Այդ մեղեդիները իրանց յատուկ քաղցրութեամբ խորտակում են փականքներով գոցած կապանքները և բաց անում նրանց խորհրդաւոր դռները, որտեղից կեանքը իր սոսկութեամբ, իր անմեղ մերկութեամբ ե-րևան է գալիս և զգում ես քո ինչ լինելը։ Դու այդ կեանքի բիւրաւոր մասնիկներից մէկն ես։ Այո՛, այդ մեղեդիները խորտակում են իւրաքանչիւր քարացած զգացմունքի դռներ և դուրս են հանում այնտեղից զգացմունքի այնպիսի նմուշներ, որպիսին առանց նրանց թերևս յաւիտեան մրափէր սրտի խորքերում և երբէք երևան չը գար։ Եւ այդ մեղեդիները կապուած պատարագի, այդ գերագոյն խորհրդի, հեա յարատև սիրելի են եղել և են իրանց հարազատ սրտերի համար, որոնք իրանց նուիրական վայրկեանները յաւէժ նրանցով են ան-մահացրել։ Այսպէս է միշտ երաժշտութիւնը, այսպէս է նրա քաղցր երգեցողութիւնը։ Դպիրների զգեստաւորուած խումբը ա-ռաջ անցաւ, թնդացնելով օդը իր մելամաղձոտ ձայնով՝ «Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալ...» որը եկեղեցու դռնից արձագանք առած թռչում էր հեռու, շատ հեռու։ Բազմութիւնը դուրս էր բերում ննջեցեալին՝ սկսում էր յուղարկաւորութեան հանդէսը դէպի գիւղական գերեզմանատունը, գիւղից փոքր ինչ հեռու։

Ննջեցեալը Վահէի մայրն էր։ Բացի քոյր Եղիսից ոչ ոք չը կար. դա անտէր մեռել էր, առանց ազգական-բարեկամի։

Հանդիսականները կանգնեցին մի նորափոր գերեզմանի ե-զերքին և քահանան սկսեց թաղման կարգը կատարել։ Լսուեց քահանայի բարձրաձայն մաղթանքը՝ «հող էիր և ի հող դարձցիս»... և բազմութիւնը թիերով մօտ եկաւ յաւիտեան ջնջելու ննջեցեալի գոյութիւնը երկրի երեսից։

Մինչ այդ, գերեզմանոցի հակառակ կողմից փոթորկի նման արշաւում էին մի խումբ ձիաւորներ, որոնք, ինչպէս ապացու-ցում էր նրանց ձիերի բերանների փրփուրը և մարմինների

քափ ու քրտինքը, կարելոյն չափ փութացել էին ժամ առաջ այդտեղ հասնել։ Նրանք բոլորն էլ մի ահարեկող սարսուռ էին տարածում իրանց շուրջը։ Բոլորն էլ ոտից գլուխ սպառազինուած էին և լուռ ու մունջ զգուշութեամբ շարունակում էին իրանց ճանապարհը։ Դրանց մէջ աչքի էր ընկնում մի թխադէմ ձիաւոր, թէ անվեհերութեամբ թէ մռայլ կերպարանքով։ Դա խմբի գլխաւորն էր։ Նրա կողքին մի ոսկեգոյն նժոյգի վրայ բազմած՝ ընթանում էր նրա ընկերը, որը նոյնպէս հեղինակաւոր տեղ էր բռնում ասպախմբի մէջ։ Տիրութեան, նիրքին վշտի քայքայիչ խոցերը ժամանակից առաջ էին ակօսել նրա դէմքը իրանց թախծալի հետքերով։ Նրանք հասան գերեզմանոցին և փոքր ինչ հեռու վայր եկան ձիերից. նրանցից մի քանիսը ուղղեցին իրանց քայլերը դէպի երևացող բազմութիւնը։ «Հոդ էիր... կրկնեց քահանան, և բազմութիւնը շուռ եկաւ դէպի աղօթարան, իսկ նրանցից մի քանիսը վերցրին թիերը, մի բոպէ ևս... ննջեցեալը ծածկուած կը լինէր հողի կոյտերով, բայց այդ ժամին ոսկեգոյն նժոյգի վրայ եղած երիտասարդը լեղապատառ ճչոցով վրայ վազեց.

—Մայր, մայր իմ, որքան անբաղդ էի... այդ ո՞ւր առանց ինձ... տա՛ր, տա՛ր, սիրելի մայր իմ, ինձ էլ տար այս աշխարհից... սև ու մութ է իմ օրը, մեռած է իմ սիրտը... դու էիր միակ սփոփանքս, սակայն դու էլ գերեզման ես գնում... ո՜հ, դարձեալ գերեզման...

Վերջին բառերը արտասանելիս նա թուլացած ընկաւ մօր դիակի վրայ, երկու ձեռքով գրկելով նրա սառնագոյն երեսը և ծածկելով անթիւ ու անհամար սրտառուչ համբոյրներով։ Քահանան, բազմութիւնը մնացին շուարած. նրանք տեսնում էին դըժբաղդ Վահէին, որը աճապարել էր վերջին հրաժեշտը տալու իր թշուառ մօրը։ Տեսարանը ցնցող էր։ Բոլորն էլ լուռ էին։ Տարիներով կորած, մեռած և սպանուած համարուած որդին յայտնուել էր անտէր չը թողնելու մօր դիակը։

Վերջապէս, ամենից շուտ սթափուեց ասպախմբի գլխաւորը։ Դա Արթօն էր, որը բարձրացնելով թուլացած Վահէին, առաջարկեց քահանային շարունակել ընդհատուած մաղթանքը։ Դիակը շուտով կորաւ հողակոյտերի տակ։ Քահանան սկսեց կնքել գերեզմանը։ Ցանկարծ բազմութեան գլխավերևից սուլեց հրացանի գնդակի վզզոցը, որը կրկնուեց մի քանի անգամ, և այս ու այն կողմից որոտացին հրացաններ։ Արթօն ուշքի եկաւ։ Ուշքի եկաւ և Վահէն։ Իրանցից ոչ հեռու տեսան Վռամին շրջապատուած մի քանի պաշտօնակատար ձիաւորներով, որոնք նրա առաջնորդու-

թեամբ փութացել էին ձերբակալելու այդ յանդուգն շրջմոլիկներին՝ Արթոյին և Վահէին։

Արթոյի և Վահէի դրութիւնը օրհասական էր։ Նրանք հրացաններ չէին վերցրել իրանց հետ, այլ թողել էին ընկերների և ձիերի մօտ։ Սակայն անձնատուր լինել նրանք չէին էլ մտածում, ուստի հանեցին ատրճանակները և առաջարկեցին բազմութեանը ճանապարհ բաց անել։ Բայց պաշտօնակատար ձիաւորները ամեն տեղ կտրում էին նրանց ճանապարհը։ Յանկարծ գերեզմանոցի միւս կողմից սլացան մի խումբ ձիաւորներ, որոնց առաջնորդում էր մի գիղեցկատեսիլ պատանի, կայծակի արագութեամբ ճեղքեցին ամբոխը և մի ձի, որից կախուած էին նրա տիրոջ զէնքերը, ետևից քաշելով, անցաւ դէպի Արթօն։ Դա Սալվին էր, որին, նոյնպէս մի ձի քաշելով, հետևում էր Թորոս-բիձան։ Խմբի միւս ընկերները բաց արին իրանց հրացանները և թընդացրին շրջակայքը։ Ամբոխը խռնուեց, մի իրարանցում անցաւ նրա մէջ, որի խառնաշփոթութեան ժամանակը Վահէն և Արթօն ցատկեցին ձիերի վրայ և դուրս թռան բազմութեան շարքերից։ Սալվին և Թորոս-բիձան հետևում էին նրանց։ Յանկարծ լսուեց մի ճիչ և Թորոս-բիձան թիկունքից վիրաւորուելով վայր գլորուեց ձիու վրայից։ Փոքր ինչ հեռանալով, Արթօն մի ակնթարթում կարգի բերեց իր ցաք ու ցրիւ եղած ընկերներին և հրամայեց դիմադրութիւն ցոյց տալ։ Սկսուեց կատաղի կռիւ։ Բազմութեան կողմից ընկան և վիրաւորուեցին մի քանի մարդիկ։ Սակայն, երբ կռիւը սուր կերպարանք ստացաւ, Վռամը ծլկուեց կռուողների միջից։ Հետզհետէ Արթօն սկսեց հեռանալ, թողնելով այդ տեղ թշուառ Թորոս-բիձայի արիւնաշաղաղ դիակը իր միւս երկու ընկերների դիակների հետ։

XI

Երեկոյ էր։ Անթափանցելի մթնշաղ խաւարը իջնում էր Խասթուրի փողոցներում, ուր անցուդարձը վաղուց էր դադարել։ Լացի ու վախի օրեր էին։ Դեռ արևը չը մտած՝ սարսափահար գեղջուկը ամուր փականքներով կողպում էր դուռը և իր գլուխը կորցած՝ կծկւում էր թոնրի կողքին և անձնատուր լինում հաղար ու մի ծանրաշունչ խոհերի։ Վաղուայ օրուայ մասին խոկալ նա ընդմիշտ մոռացել էր։ Այդ դրականապէս կախուած էր այն հանգամանքներից թէ՝ ինչպէս է լուսանում օրը, ինչպէս է գալիս առաւօտը և ինչ է բերում նա իր հետ—ուրախութիւն, տրտմութիւն, հալածանք, թէ՞ անդորր կենցաղ, սուր-թուր իր կրծքին, թէ՞ հանգիստ դաշտային աշխատանք։

Խաւարը հետզհետէ թանձրանում էր։ Գեղջուկի մրմունջները մերթակի խանգարում էին տիրող լռութիւնը։ Այդ ժամին գիւղի ծայրի խրճիթներից մէկում նահապետական պարզ ու անշուք սփռոցի շուրջը շարուել էին մի քանի տասնեակ մարդիկ։ Խորոված ի անուշահոտ բուրմունքով ծփում էր այդ միջավայրը։ Գինով լի բաժակը արագ-արագ անցնում էր ձեռքէ ձեռք և մի ինքնուրոյն ախորժակով դատարկւում և վերստին լցւում։ Ընթրողները ոտքից գլուխ սպառազինուած էին և քաղցի ազդեցութեան ներքոյ գայլի ագահութեամբ ուտում էին և ժամանակ չէին գտնում զրոյց անելու։ Մի քանի րոպէ տևից այդ դրութիւնը։ Վերջապէս, նստողներից մէկը, որի նազելի և քնքոյշ ձայնի շեշտերը աւելի քան մարդկային գեղեցիկ սեռին է վերապահուած, ընդհատեց լռութիւնը.

—Արթօ, վաղ առաւօտեան ո՞ր կողմի վրայ պիտի շեղենք մեր ճանապարհը,—հարցրեց գեղեցկատեսիլ երիտասարդը, որի իւրաքանչիւր շարժումը, իւրաքանչիւր հայեացքը դէպի իր խօսակիցը զուրկ չէին առանձնակի գուրգուրանքից։

—Սալվի, ի՞նչու ես այս վերջերս միշտ հետաքրքրւում մեր ուր գնալու և ի՞նչ անելու մասին։ Չէ՞ որ, ուր որ գնանք, դու էլ մեզ հետ ես, էլ ի՞նչ անհանգիստ լինելու առիթ կարող է տեղի ունենալ,—պատասխանեց Արթօն, որի ապառաժ սրտում մի արտասովոր յեղափոխութիւն էր առաջ եկել, ուր մի առանձին տեղ ունէր բռնած և Սալվին։

Նրանք սիրում էին միմեանց այն օրից, երբ Արթօն փրկել էր նրան քրդերի ճանկերից։

—Հէնց էնպէս, միտս եկաւ, հարցրեցի,—պատասխանեց Սալվին։

—Վաղը կաշխատենք Քոսա-դաղ լերան լաւ դիրքեր բռնել, ասում են, նրա մօտով քրդերը դարձեալ պիտի արշաւեն այս կողմերը։ Տեսնենք, կը յաջողուի մեզ հանդիպել նրանց և մի լաւ հարսանիք բռնել։

— Արթօ, լաւ տեղ ես ընտրել,—մէջ մտաւ Վահէն,—ուստի ես չեմ կարող այս բաժակը դատարկել առանց յարատևութիւն մաղթելու այդ լեռներին։

—Առաջարկի՞ր, առաջարկի՞ր, Վահէ, ո՞վ է քեզ արգելում,—միաբերան կրկնեցին ընթրողները։

Երիտասարդը, խոր հոգոց քաշելով, վերցրեց բաժակը և ոգևորութեան խոհերով լցուած՝ կրակոտ և սուր ձայնով թընդացրեց միջավայրը։

—Վշտի և խռովայոյզ մրմունջների ընկերներ, շատ անգամ

են մեզ իրանց թևերի տակ առել հայրենի սարերը, հայրենի ձորերը, շատ անգամ են նրանց սուր-սուր գագաթները և անյատակ խորխորատները իրանց քար ու թփով ներկուել մեր նախնիքների արիւնով, և յաճախ ականատես եղել իրանց զաւակների հերոսական մահուան. և որովհետև վաղ առաւօտեան մենք ապաստան ենք գտնելու այդ սարերից մէկի գագաթին, այդ պատճառով էլ ես այս բաժակը առաջարկում եմ նրանց յարատևութեան, որ նրանք միշտ կենդանի վկաներ մնան իրանց թշուառ զաւակների անձնուիրութեանը։ Այո, այդ լեռներից իւրաքանչիւրը իր դրախտանման հովիտների հետ միասին իր կրծքում անթիւ ու անհամար ապացոյցներ ունի մերայիններին մասին, որոնք ապագայ մարդկութեան համար հատորների աղբիւրների կը ծառայեն։ Այո, թող ապրեն այդ լեռները, թող նրանց ալևոր գլուխները յաւէժ ցցուած մնան տիեզերքի ահեղ աթոռի առաջ, որտեղից դիւրին է նրանց համար մեր դարևոր բողոքը, մեր դարևոր խոցերը երևան հանել։ Թող նրանց գագաթներին ընկած անթիւ զոհերի անմեղ արեան ճենճերոցը բարձրանայ դէպի անհուն եթերը՝ նրա գութն ու ողորմութիւնը շարժելու։

Նրա ձայնը ընդհատեցին մարդկանց ճիչ ու աղաղակներ։ Նստողները ոտքի թռան և խրճթի ներքնայատակ գաղտնի անցքով հեռացան դէպի մօտակայ ձորակը, ուր նրանց ձիերը արածում էին։ Վայրկենաբար բազմեցին ձիան վրայ և մտան գիւղը, ուր մարդկանց աղեխարշ լաց ու կոծը, սուգ ու շիւանը դղրդացնում էին շրջակայքը։

Խասթուրը թաղանի էր մատնուած։

Դրսից եկած այդ խմբի հրացանների որոտմունքը ուշքի բերին քրդերին, որոնք սկսեցին կատաղի դիմադրութիւն ցոյց տալ անյայտ եկողներին։

Արթօն կռուում էր հերոսաբար և կայծակի արագութեամբ այս ու այն անկիւնն էր թռչում ղեկավարելու իր ընկերներին։ Հեծկլտացող բազմութիւնը նոր զգաց՝ թէ ինչ է կատարւում իր շուրջը և սկսեց ձեռքից եկած օգնութիւնը չը խնայել անծանօթ փրկիչներին։ Սակայն մի ուժեղ հարուած գետին տապալեց Արթօյին։ Դեռ Արթօն չէր ըմբռնել թէ ինչ պատահեց իր հետ, նրա գլխի վերև ցցուեց մի ահռելի քուրդ, որը մերկացրած սուրը ձեռին՝ պատրաստւում էր կրկնելու հարուածը։ Մի րոպէ ևս... և Արթօն յաւիտեան կորած էր... Բայց յանկարծ մի անսպասելի ձեռք իր շլացուցիչ սրով պտտուեց օդի մէջ և անշեղ հարուածը կտրեց քրդի ձեռքը։ Շուարած քուրդը մինչ ձգտում էր ըմբռնել թէ ով էր հարուածողը, յաջող հա-

ռուածը կրկնուեց, այս անգամ արդէն գազանացած քուրդը գետին գլորուեց։ Արթօն ոտքի թռաւ և իր հզօր բազուկներով գրկեց իր փրկողին և հրացանների որոտումների և գնդակների տարափի ներքոյ ծածկեց նրա այտերը սիրաշունչ համբոյրներով։ Սիրահար զոյգերը կռուի այդ տագնապալի պահուն երջանիկ էին իրանց համարում. նրանք մոռացութեան էին տուել իրանց շրջապատը։

Դրանք Արթօն և Սալվին էին։

Մինչ սրանք ընկղմուած էին ինքնամոռացութեան մէջ, մօտակայ դէզի ետևից որոտաց հրացանը, որի հետ միաժամանակ լսուեց Սալվիի աղիողորմ ճիչը։ Դարանակալ քրդի գնդակը անշեղ էր. նա անցել էր թշուառ Սալվիի կրծքովը։ Արթօն շանթահար գազանի նման այլայլուեց և վայրկենաբար իր զոհի հետ դուրս թռաւ կռուի ասպարէզից։

Անցաւ մի շաբաթ։ Քօսա-դաղ լերան լանջերում անվրդով արածում էին մի խումբ ձիեր։ Լերան գագաթին փորուած երեւում էր մի թարմ գուբ, որը գերեզմանի էր նմանում։ Լեռնալանջերի քարայրների մէկից դուրս եկած մի խումբ մարդիկ, սև թախիծով լցուած՝ ուղղեցին իրանց քայլերը դէպի նորափոր գերեզմանը։ Նրանցից մի քանիսը տանում էին իրանց հետ մի մատաղահաս աղջկայ դիակ։ Դա վաղամեռիկ Սալվին էր։ Կանգնեցին գերեզմանի եզերքին և նրանցից մէկը՝ արտասուաթոր աչքերով գրկելով դիակը, դրեց նրան գրի մէջ, ապա, արձակելով վրայից իր դաշոյնը և ատրճանակը, դրեց նրանց հանգուցեալի ձեռքերում, կրկնելով.

—Քեզ, իմ վաղամեռիկ Սալվի, այս կուսական բարձրագագաթ լերան կատարին եմ հանգիստ տալիս այս զէնքերովը, որոնք թող վկայ լինին, որ մենք, նոյնպէս և դու, հայ կինդ, զէնքերի մէջ ենք գտել մեր փրկութիւնը և նրանցով ենք պաշտպանել մեր հայրենիքի պատիւը...

Նրա սիրելիի չքնաղ երեսը կորաւ հողերի կոյտերի տակ։

Ապա բոլորը միասին, բազմելով ձիերի վրայ, հեռացան այդ տեղից։ Ընկերները, նկատելով Արթօյի խորին տրտմութիւնը, սկսեցին իրանց քաղցրահնչիւն երգերով փարատել նրա վիշտը.

Մի տրտնջիր, դու սիրուն կոյս,
Ա՛ռ զէնքերդ, տուր խրախոյս,
Ջարդել քրդին ունինք մենք յոյս,
Մի վհատիր, տուր խրախոյս...

Այսպէս էին երգում Արթօյին ուրախացնելու համար։
Բայց կա՞յ ուրախութիւն սիրազուրկ սրտի համար։

ԽԱՆԶԱԴԷ

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ[1])

ՐՕԶԵԳԵՐԻ

Քսաներեքորսերրորդ կիրակի

Այն երիտասարդը, որին արդէն նկարագրել եմ քեզ «Վարդաղ» անունով, մի քար ղցեց Ադամի հօտի մէջ։ Սա մի տեսակ զուարճութիւն է Հոկեզալստեան տօնի օրը և անպիտանին յաջողուեց վիրաւորել ժառանգ սպասող մի ոչխարի։ Ես բռնեցի նրան և լաւ քոթկեցի։ Այժմ ուզում է դանդատուել ինձանից։

Բոխերը, որպէս ցաւի ընկեր, առանձնապէս խղճում էր նրան և ուզում էր նրա համար փարախի մի անկիւնում թարմ խոտից տեղ պատրաստել, բայց եկաւ քոյրը և թախանձեց ոչխարը իրեն տալ։ Բոխերը ցնծութեան մէջ էր, որ Բարբէլը որևէ ցանկութիւն է արտայայտում և անմիջապէս ոչխարը տուեց նրան։ Աղջիկը ծանր կենդանին վերցրեց զոգնոցի մէջ և տարաւ իր սենեակը։ Այնտեղ նա ոչխարի վէրքը լուսաց տաք ջրով, կտրեց նրա շուրջի բուրդը, ձէթի սպեղանի կապեց վրան և դրեց կողովի մէջ մաքուր դարմանի վրայ։ Սկզբում ոչխարը ողորմելի կերպով բառաչում էր, բայց յետոյ հանգստացաւ և երախտագիտութեամբ նայում էր բարերարուհուն, որը տաք կաթ և թարմ արտոյտ էր տալիս իրեն։ Ամենս էլ պատրաստ էինք վէրքը կապելիս օգնելու, բայց Բարբէլը ամենն էլ ինքն էր անում։ Մինչ այդ, ես դիտում էի նրա բնակարանը. մաքրութեամբ փայլող շորի պահարան, փոքրիկ դրասեղան, ջահրա, պատուհանի վրայ ծաղիկներ։ Ցիշում ես Գրետխենի սենեակը։ Երկնքի հետ մաքառող բազմաթիւ ֆաուստներ է ուղարկել Միֆիստոֆելը այնտեղ։ Բայց դա միայն գեղեցիկ խոս-

1) Լումայ 1909 № 7—8

քի համար է. այս դէպքում բոլորովին այլ է։ Երբ ոչխարը նորից անհանգիստ եղաւ, նա քնքշաբար, ինչպէս երեխային, ասաց. «Դարձե՞լ ցաւում է, հա՞» և սկսեց լրջութեամբ օրօրել զամբիւղը։

—Ինչի՞ նա էլ դէթ մի անգամ չի ծիծաղում, ասաց օջաղի մօտ կանգնած մայրը։—Ախր ոչինչ չի փոխուել. ի՞նչն է խանգարում նրա ուրախութիւնը։

Եկաւ պառաւ Մարենցելը, որին հրաւիրեցին մեծ սենեակը, որովհետև շան հաչոցը վախեցնում էր ոչխարին։ Լսելով մօր բացականչութիւնը թէ Բարբելը երբէք չի ծիծաղում, ասաց.

—Տեսէք, եղունդների վրայ սպիտակ նշաններ չունի՞ արդեօք։ Եթէ նշանները աջ ձեռքի վրայ են, երջանկութիւն է սպասում նրան. եթէ ձախ—դժբաղտութիւն, իսկ եթէ նշանը չորրորդ մատին է, կ'նշանակէ փայծաղն է ցաւում, իսկ այդպիսի դէպքերում մարդը չի կարող ծիծաղել։

Անմիջապէս սկսեցինք դիտել մեր մատները և գաղտնի կերպով էլ Բարբելինը։ Ձախ ձեռքին ոչինչ չունի, միայն շատ գեղեցիկ է, աջ ձեռքի եղունդների վրայ կան մի քանի սպիտակ նշաններ։ Մայրը խորհրդաւոր կերպով նայեց հօրը։ Ուրեմն երջանկութիւն և ոչ մի հիւանդութիւն։

Հապա ինչո՞ւ չէ ծիծաղում։

Առաւօտեան դէմ Ֆրանցելը լսել էր Բարբելի աղաղակը։ Տեսանք որ հիւանդ ոչխարը գիշերով մի սև գառնուկ էր աշխարհ բերել։ Ոչխարը լիզում էր նրան, իսկ Բարբելը կանգնել էր մօտը և արտասուոր կերպով նայում։

Աղամը շշնջաց կնոջը՝—լաւ. եղաւ, կուրախանայ։ Այժմ կայ մէկը, որին կարող է սիրել։

Բարբելը սկսեց խնամել թաւալուող փոքրիկ կենդանուն. ոչ ոք չէր համարձակւում մտնել նրա սենեակը։ Միայն ճաշից յետոյ Բոխերլին յաջողուեց մտնել նրա մօտ։ Նա թղթի մէջ փաթաթած կարմիր ժապաւէն էր տանում գառան վզից կապելու համար։

—Դու սրան մի մեծ բան ես կարծում, ասաց Բարբէլը, իսկ ժապաւէնը, որ գնել ես, քեզ համար պահիր։

— Ես չեմ առել. Կուլմբոկի աղջիկը ընծայեց ինձ։

— Ի՞նչպէս ես նուէրները ուրիշներին տալիս, ասաց աղջիկը շոյելով նրա գլուխը.— ընծաները չի կարելի ուրիշներին նուիրել։

Տղան վիրաւորուած երեսը դարձրեց նրանից։

— Ինձանից ոչինչ չես վերցնում, իսկ ամեն պատահողից պատրաստ ես ամեն բան ստանալ։

— Ամեն պատահողի՞ց, ի՞նչ ես ուզում ասել, Ռոխերլ։

Աղջիկը շրթունքը կծեց և աչքերը փակեց, կարծես սուր ցաւ զգալով։

— Երեխայ ես, Ռոխերլ, ասաց նա քնքշութեամբ— այլևս երբէք այդպէս չ՝խօսես։ Ամեն պատահողից. միայն մէկին կարելի է սիրել։

— Ինչո՞ւ այլևս ինձ չես սիրում, բացականչեց տղան։

— Անմիտ, չէ՞ որ դու իմ սիրելի եղբայրն ես։

Տղան դրկեց նրան, ուժգին համբուրեց և դուրս գնաց։

Ռոխերլը օրէց օր նկատելի կերպով դունատւում է և ինչ որ տարօրինակ արտայայտութեամբ նայում։ Նրա հայեացքը ինձ լաւ չէ թւում։ Աչքերը քամուց հալածուող կայծի նման են թռչկոտում։

Իմ կենցաղս, փառք Արարչին, առայժմ վատ չէ։ Աշխատանքները այժմ պակասել են։ Հերկելը վերջացաւ, մարգագետինները մաքրած են և սանրած, երբեմն պէտք է լինում թափառել անտառում և վառելու համար նոր ցախ ժողովել։ Այնուհետև հունձի համար պատրաստութիւններ են տեսնւում. սրում են մանգաղները, եղանները և փոցխերը ամրացնում, կառասայլերի ակները տեղերը դարսւում։ Փորում ենք բանջարանոցի հողը և կաղամբ ցանում։ Պահասանի տեղ կանգնեցրած է խրտուիլակը, որը ես գեղեցիկ կերպով շինեցի Ռոխերլի հին անդրավարտիքից, Ադամի քայքայուած վերնազգեստից և գլխարկից, փայտից ու յարդից... Թէպէտ և ծեր նապաստակները չեն վախենում դրանից, այլ նոյնիսկ ամառը նրա ստուերի տակ կաղամբ են կրծում։ Մեր ծողէ ոստիկանից փախչում են միայն փոքրիկ, անփորձ նապաստակները։

Որովհետև այս գեղեցիկ դիշերներին մարդուս քունը միշտ չէ տանում, երբեմն ես էլ եմ խրտուիլակի դեր կատարում։ Բանջարանոցի կողքին ծաղկում է կեռասենին, նրա տակն եմ նստում դիշերները և զմայլուում։ Ուրբաթ օրն էլ նստած էի սովորական տեղս։ Տաք էր, երկինքը պատած էր ամպերով, սարի գագաթներին փայլատակում էր կայծակը։ Խրճթում ամենքը քնած էին. ամենայն տեղ լուռ էր. գագաթել էին նոյնիսկ կովերի զանգակների զնգզնգոցները փարախում։ Ոչ մի լուսատտնիկ, միայն փայլակներն էին լուսաւորում ամեն կողմից։ Կամացուկ մի փոքր անցայ, ականջ դնելով գոնէ հեռուից որևէ ձայն լսելու յուսով, ոչ մի ձայնուն։ Խորին լռութիւն էր տիրում։ Նարից մօտեցայ խրճթին մտածելով՝ հանդիստ կաց, մարդկային սիրտ։ Նկատեցի որ անկիւնում ով որ կանգնած էր աղջկայ պատուհանի մօտ։ Պատուհանը բաց էր։ Սենեակում մէկը լսլիս էր, դառնագին ողբում, մօտը կանգնած մարդը ինչ որ ասում էր, որ ես չէի կարողանում հասկանալ. ըստ երևոյթին ուզում էր մխիթարել նրան։ Ուսուցիչն էր նա։

—Մի՞թէ այժմ կարող ես դարձեալ սիրել ինձ. ասում էր աղջիկը։

—Խնդրում եմ, մեղաւոր մի համարի քեզ։ Այդ բոլորը թող ինձ. ես քեզ չեմ ծդի։

Սենեակում հեկեկանքը շարունակւում էր։

—Խե՛ղճ հայր, խե՛ղճ հայր։

Ուսուցիչը դարձեալ կամաց խօսում էր և հանգստացնում նրան. նրա ձայնը յուզմունքից դողում էր, իսկ աղջիկը շարունակում էր լալ։

—Վաղ պէտք է ասէիր ինձ. ասում էր ուսուցիչը։

—Ես սպասում էի, որ Աստուած մահ կուղարկի ինձ. ես աղերսում էի Նրանից այդ...

Այստեղ արդէն ես քաշուեցի իմ խուցը։ Ի՞նչ ասաց ինձ ուսուցիչը դրօսանքի ժամանակ։ Մի՞թէ... ոչ։ Չեմ կարող մտածել ամենավատ բանի մասին, չեմ կարող տանել այդ ծերունու պատճառով։ Չէ՞ որ նա հիւանդ է, վատ կ'լինի նրա բանը—ահա ինչի մասին է խօսում նա ուսուցչի հետ։

Պառկեցի յարդիս վրայ, բայց մի անդամ էլ վեր կացայ և դուրս ելայ։ Ամեն ինչ լուռ էր։ Պատուհանի մօտ ոչ ոք չկար։

Երբ կրկին պառկեցի, միբան անցաւ մտքովս. չէ՞ որ պատուհանը առանց վանդակի էր։

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ᲫᲐᲠᲗᲣᲚᲘ ᲡᲢᲐᲛᲑᲐ *1709—1909*

(Վրացերէն տպարան Զ. Ճիճինաձէի 1709—1909), Թիֆլիս 1909

Մեզ ուղարկած է վերոյիշեալ վերնագրով մի գրքոյկ, նուիրուած վրացերէն տառերի ու տպարանի պատմութեան։ Հեղինակը, վրացերէն ժողովրդական զանազան բրոշիւրների հրատարակիչ, կամեցել է տալ գլխաւորապէս վրաց տպարանների ժամանակագրական համառօտ պատմութիւնը, բայց և տեղ տեղ աւելացրել է Էջմիածնում և Թիֆլիսում զանազան ժամանակ բացուած հայ տպարանների մասին խիստ կցկտուր և ըստ մեծի մասին անճիշտ տեղեկութիւններ։

Հայ տպարանների մասին պ. Ճիճինաձէի գրածներից ամենախոշոր սխալն այն է, որ Սիմէոն կաթողիկոսի 1767 թուին Էջմիածնում բացած հայ տպարանը անուանում է «առաջին հայ տպարանը», դուցէ պարոնը ցանկացել է ասել, որ նա առաջին հայ տպարանն էր Կովկասում կամ Հայաստանում, քանի որ հայ տպարանների պատմութիւնը յետադարձ ընթացքով հասնում է մինչև 1512 թուականը, և թերևս աւելի էլ վաղ, որ յայտնի չէ եղել վրացի բանասէրին։

Այնուհետև գրքոյկի մէջ մտնում են անթիւ սխալներ. օրինակ՝ յայտնի է, որ Վենետկի Մխիթարեան միաբանութիւնը ունի հրատարակութիւններ ոչ միայն հայերէն լեզուով, այլ և ուրիշ շատ լեզուներով, մինչև իսկ Նարեկացու յայտնի «Հաւատով խոստովանիմն» ու պատարագին ասուող «Որ օրհնես զայնոսիկ» հռչակաւոր աղօթքը տպած ունին 25 և 50 լեզուներով, այդ նոյն վենետկեցիք 1850-ական թուականներին մի քանի եկեղեցական գրքեր էլ տպեցին վրացերէն լեզուով գլխաւորապէս Ախալցխայի վրացախօս հայկաթոլիկների համար, բայց պ. Ճի-

ճինաձէն մոլորութեան մէջ է ընկնում, ասելով թէ Վենետիկում 1850 թուին վրացի կաթոլիկ եկեղեցականները անկախ տպարան բաց արին և վրացերէն գրքեր տպեցին։

Հեղինակը վրաց տպարան է անուանում այն բոլոր հայ տպարանները, ուր ի միջի այլոց ունեցել են վրացերէն տառեր և վրացերէն մի երկու գրքոյկ տպագրել։ Այնպիսի հայ տպարաններ եղել են հարիւրաւոր, որոնց չէ կարելի ի հարկէ բուն վրաց տպարան անուանել։

Անհիմն տեղեկութիւններ է հաղորդում հեղինակը և վրացերէն լրագրի սկզբնաւորութեան մասին. չունենալով ձեռքի տակ հնագոյն վրացերէն լրագիրը և հաստատ էլ չգիտենալով նորա սկզբնաւորութեան ժամանակը՝ նա ասում է, թէ Հայազգի Տէր Դաւիթ Յովհաննիսեանը իւր ազգական Պօղոս Յովհաննիսեանի հետ միասին 1782 թուին սկսեցին վրացերէն գրքեր տպել, ի միջի այլոց տպեցին իրանց տպարանի պատմութիւնը. «այս գիրքը, գրում է ճիճինաձէն, լրագրի կերպարանք է կրում». և ուրեմն հաճած իւղի նման ընդունում է, որ նա է վրաց առաջին լրագիրը։

Մինչև անգամ հեղինակը չէ տեսել այդ հրատարակութիւնը և թոյլ է տալիս իրան ասէկոսէների հիման վերայ ըստ կամս դունաւորումներ տալ պատմական դէպքերին. նա ասում է, հինաւուրց մարդկանցից լսել է, որ այդպիսի հրատարակութիւնը «լէպօրտի» (рапортъ, ծանուցում) վերնագիրն է եղել կրելիս։ Պատմութիւնը ասէկոսէների վրայ չէ կարող հիմնուել։

Թուականների մէջ աններելի սխալներ կան. օրինակ 1709 թուի փոխարէն 1909 է (եր. 4) և այլն. և առհասարակ 36 մանրատառ էջերից բաղկացած թուականներով և մանր տեղեկութիւններով լի այս գրքոյկը որքան էլ համակրելի մի ձեռնարկութիւն է և գովելի հեղինակի փոյթը այդ մասին, լիքն է պատմական և ժամանագրական սխալներով և չէ կարող գիտական այն արժէքը ունենալ, ինչ որ ցանկալի էր։

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆ

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ

Պ. Գ. Ե. «Լումայ»-ի № 7—8-ում «Իսկական պատճառները» խորագիր կրող մի յօդուածում աշխատում է ցոյց տալ, թէ արդեօք ինչո՞ւ ռուսահայերը չեն օգնում իրենց աղէտեալ եղբայր տաճկահայերին։ Շատ գեղեցիկ ցանկութիւն՝ որոշել, ջոկել այն պատճառները, որոնք արգելք են լինում ռուսահայերին օգնութեան ձեռքը մեկնել տառապեալ մարդու։ Այս ցանկութեամբ ղեկավարուելով և անաչառ դատելով կարելի էր որոշ եզրակացութիւն առաջ բերել վերջին ժամանակուայ պօլեմիկայի մասին, մի պօլեմիկայի, որը տեսեց բաւական երկար, որը աւելի շատ բառեր կուտակեց մեր իրականութիւնը լուսաբանելու շտեմարանում, քան եկաւ մի որոշ և դրական կարծիքի, որ հիմնուած լինէր ազգի անցեալի և ներկայի խոհեմ հասկացողութեան վրայ։

Յօդուածի առաջին մասի վերաբերմամբ մենք ոչինչ չունենք ասելու. մենք, ընդհակառակը, պնդում ենք, որ եթէ հայը ծառայէր ոչ անձի, այլ գործի իւր ամբողջ պատմութեան ընթացքում, հայերի վիճակը այժմ բոլորովին այլ կլինէր, եթէ ամեն մի հայ իւր ամբողջ կեանքի ընթացքում ջանար իւր ոյժերի չափ օգտակար լինել մի ընդհանուր գործի և իւր աշխատանքը միացնէր ընդհանուր շինարար գործունէութեան, մի կողմը թողնելով թէ անձնական հաշիւները և թէ սնափառութիւնն ու փառասիրութիւնը, այն ժամանակ հայկական կուլտուրան քսաներորդ դարու սկզբում բոլորովին այլ պատկեր կը ներկայացնէր և մենք չէինք նախանձի ոչ բուլղարացիներին, ոչ իտալացիներին, ոչ սերբիացիներին։

Բայց հայոց ազգը մի պատմական առեղծուած է։ Հայկական իրականութիւնը չի համապատասխանում ոչ մի մեղ յայտնի սոցիալական օրէնքների։ Այստեղ ամեն ինչ հիմնուած է բոլորովին այլ սկզբունքի վրայ. այստեղ ազգ չկայ, այլ կան անհատներ, որոնք իրար հետ կապուած են միմիայն նորանով, որ մի եկեղեցու են պատկանում. եկեղեցում նրանք հայ են, դուրսը, ուր իսկական ազգային բարգաւաճման ասպարէզ է բացւում նրանց

առաջ, նրանք անջատ են, որովհետև... մեր ազգութիւնը քողարկուում է մեր մէջ գոյութիւն ունեցող աւելի ուժեղ կողմերով։

Նախ և առաջ հայը—վաճառական է և այդ զգալի է ամեն քայլափոխում. ներկայ դարում Սոկրատէսներ, որոնք բայցոդեայ քարոզելով պահպանէին որոշ գաղափարներ (ոչ գիտական-փիլիսոփայական ի հարկէ) անհնար է։ Այժմ կուլտուրան պահանջում է մեծ մտաւոր-բարոյական աշխատանք և նաև մեծ դրամագլուխ։ Իրօք որ ունևոր կամ հարուստ հայ մարդը ինքնայօժար օգնութեան ձեռք է պարզել տառապող ազգի։ Ես չեմ դիմում մատենագրական տեղեկութիւնների, որոնց դիմում է պ. Գ. Ե. մենք չը գիտենք, ինչ շարժառիթներ են գոյութիւն ունեցել պատմական շրջաններում։ Մենք առանց մատնացոյց անելու փաստերի վրայ, խիստ շօշափելի ամփոփումներով պիտի խօսենք ներկայի մասին։

Դժուար է մատնացոյց անել զէթ մի օրինակի, ուր նուիրատուութիւն կատարուած լինի առանց արտաքին ազդեցութեան, ինքնաբերաբար, իբրև նուիրաբերողի ներքին ձայն։ Մինչև Շամախին չը քանդուեց, ոչոք ոչ մի կոպէկ չէր ուղարկում Շամախում կիսասոված կիսամերկ մանկներին. մինչև հայկական կոտորած չի սկսուում, ոչ ոք չի էլ մտածում գիւղացու վիճակի բարւոքման մասին, մինչև մի գրական դէմք չի մեռնում, երբ յայտնուում է, որ նա կամ կիսասոված է եղել կամ մի քանի գրօշ չունի իւր անձը թաղելու, որ հայ մարդն է մտածում այդպիսի գործիչների վիճակը ապահովելու մասին։ Իսկ երբ մէկը մեռնում է, անմիջապէս սկսուում է ծաղրելի յանձնաժողովների կազմակերպութիւնը, կարծում ենք այս այնպիսի ամփոփումներ են, որ ոչ մի անհատական փաստի վրայ մատնացոյց անելու անհրաժեշտութիւն չկայ։

Անցնենք միւս մասի. պ. Գ. Ե. ասում է թէ՝ ռուսահայերը տաճկահայերին տուել են «մի քանի միլիոն ռուբլի» և ապա աշխատում է ցոյց տալ թէ ինչպէս տաճկահայերը ոչ «մի կոպէկ» չեն ուղարկել մեզ, ռուսահայերիս։ Այժմ, երբ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ճիգ է թափում վերացնել գոյութիւն ունեցող ատելութիւնները մինչև անգամ երկու այլազգի և այլադաւան ցեղերի մէջ, մենք կարծում ենք պէտք է քարոզել կապը ամրացնել առանց այն էլ քաղաքապէս և տնտեսապէս քայքայուած հայոց ազգի երկու մեծ ճիւղերի մէջ։ Ազգային բարգաւաճման ձգտող բոլոր խելամիտ անձանց առաջին իսկ նպատակը պիտի լինի վերացնել և ոչնչացնել Աբդիւլ Համիդի և պատմական հանգամանքների ստեղծած այն մեծ վիհը, որը մինչև օսմանեան սահմանադրութեան

վերսկսուելը անմերձենալի անդունդ էր ստեղծում մի ազգի այդ երկու ճիւղերի մէջ։ Այժմ, երբ հնարաւորութիւն կայ նախկին կապը վերսկսել, ամէն մարդու պարտականութիւնն է վերանորոգել և ազգային կեանքի կապը։ Մենք պարտաւոր ենք հրաւիրել մեր ազգային նշանակութիւն ունեցող խնդիրները վճռելիս նաև տաճկահայերին։ Մենք պիտի ստեղծենք մի ընդհանուր հայկական մարմին։ Ուրեմն թողնենք անցեալի սխալները և առաջ ընթանանք նոր շաւղով ձեռք ձեռքի տուած տաճկահայի հետ. «ոյժը միութեան մէջ է». ահա այս դէվիզը պիտի կրի և մեր ազգային ընդհանուր դրոշակը։

Բայց մենք մի փոքր շեղուեցինք և չասացինք թէ ինչու տաճկահայը չի օգնել ռուսահային։

Ասէք խնդրեմ, երբ տաճկահայ ընդհարումների ժամանակ, մի ականատեսի նկարագրութեամբ՝ բոցի ալիքները պատել էին երկինքը և կարմիր բոցային արշալոյսը երկինք էր բարձրացնում աղէտեալների ձայնը, իսկ ցածում գնդակների տզզոցը ականջ էր խլացնում, երբ դիակները չէին հասցնում գետնում ամփոփել և գետն էին թափում, որը մարդկային արիւնով էր բուրում—այս վիճակի մէջ ամբողջ ռուսահայ հասարակութիւնը, որը ականատես անգամ չի եղած, այլ միմիայն լրագիրներով է գաղափար կազմել այդ աղէտների մասին, մի վայրկեան մտածե՞լ է օգնել որևէ մէկին և մանաւանդ տաճկահային, որը նոյն միջոցին եղել է նաև մի քանի տեղ նոյն վիճակի մէջ, պիտի ասեմ պ. Գ. Ե.-ի խօսքերով—«ի հարկէ ոչ»։

Այժմ երևակայէք, որ «վերջին քսան և հինգ տարուայ ընթացքում, երբ ռուսահայերը տուել են թիւրքահայերին մի քանի միլիոններ». այդ իսկ քսանհինգ տարուայ ընթացքում և դուցէ մի փոքր էլ աւելի ամբողջ տաճկահայաստանը եղել է Աբդիւլ Համիդի երկաթի ճիրանների տակ։ Կրակ, բոց, գնդակ, աւեր և թալան չեն պակասել տաճկահայ ոչ աղքատի և ոչ հարուստի վրայից։ Ասածներս բառեր չեն, այլ խիստ քաջ յայտնի իրական փաստեր։ Ուրեմն այժմ հակադասէք վերևի պատկերի այս տողերը և կարծեմ այլևս անհրաժեշտութիւն չի լինի բացատրել թէ՝ ի՞նչու տաճկահայերը մեզ ռուսահայերիս չեն օգնել։ Այն ժամանակ, երբ Գօլիցինը իւր ոճրագործութիւնը կատարեց ռուսահայերի դէմ, միմիայն քաջ Օրմանեանն էր, որ յանդգնեց սուլթան Աբդիւլ Համիդի տէրութեան սահմանից բողոք ուղարկել։ Ամբողջ տաճկայութիւնը կարող է պատահել անկիւններում բողոքեց այդ ակոի դէմ, բայց հրապարակի վրայ «խոնարհ ծառաներ» մնացին։

Ես մի կողմն եմ թողնում բնական տնտեսական քայքայումը, որին ենթակայ է տաճկահայը և որպիսի վիճակը բարւոքելու համար անհրաժեշտ է երկար, տոկուն և արդիւնաւէտ կուլտուրական աշխատանք։

Կարող է ռուսահայը յոգնած լինել օգնելուց, բայց յանուն մարդասիրութեան նա պարտաւոր է շարունակել իւր եղբայրական օգնութիւնը, և պիտի օգնել ոչ թէ յանուն տաճկահայերի փրկութեան, այլ պէտք է օգնել յանուն տաճկահայերի և ուրեմն համայն հայերի բարգաւաճման, այդ բարգաւաճման մէջ է հայութեան ոյժը, և եթէ չէք ցանկանում, որ հայը խպառ կորցնի իւր ֆիզիօնոմիան, պիտի աջակցէք փոխադարձ օգնութեան գործին։ Մենք տանք ինչ ունենք, իսկ մեզ տան այն՝ ինչ մեզ պակասում է։

Ուրեմն հեռու մեզանից ատելութեան գաղափարը։

Ա. Վ.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Վեհ. Կաթողիկոսի օծման հանդիսին, ինչպէս յայտնի է արդէն, աշխարհիս ամեն կողմից հաւաքուել էր խուռն բազմութիւն և դոցա հետ միասին բազմաթիւ պատգամաւորներ զանազան քաղաքներից և համայնքներից, ներկայացուցիչներ հոգևորականութեան, գպրոցների, բարեգործական և այլ ազգային բազմատեսակ հաստատութեանց։

Պատգամաւորներից և ներկայացուցիչներից շատերի վերայ իրանց առաքողները պարտք էին դրել իրենց իրաձերն ու ցանկութիւնները մատուցանել Վեհ. Հայրապետին և մասնակցել այն բոլոր խորհրդաժողութիւններին, որ տեղի կունենային էջմիածնում Վեհ. Կաթողիկոսի հրամանով ազգային էական խնդիրների վերաբերութեամբ։

Այս հանգամանքից դրդուած պատգամաւորներից ոմանք դիմումներ արին որոնց հարկն էր և խնդրեցին, որ բոլոր պատգամաւորները միասին ներկայանան Վեհ. Հայրապետին թէ շնորհաւորութիւններ մատուցանելու և թէ մասնակցելու պատգամաւորական խորհրդներին, որ լինելու էին վեհարանում։ Նոցա պատասխանեցին, որ այդ բանը տեղի կունենայ երկուշաբթի օրը։

Երկուշաբթի պատգամաւորները խմբուեցան վեհարանի առաջ և սպասում էին, որ իրանց հրաւիրեն ներկայանալու Վեհին և ժողովին մասնակցելու։ Ժամերով հարկադրուելով մնալ դուրսը և տեսնելով, որ պատգամաւորներից ոմանք արդէն վեհարանումն են և շշուկներ լսելով, որ արդէն պատգամաւորական մասնաւոր խորհրդաժողութիւն տեղի ունի ծաղկեայ դահլիճում, պատգամաւորների խումբը մի քանիսին իրանցից ուղարկեցին վեհարան տեղեկանալու թէ որքան ստոյգ է այս լուրը։ Վեհարանում նոցա պատասխանեցին, թէ այնտեղ ժողովուած են միայն այն մի քանի պատգամաւորները, որոնք Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ պատգամաւոր են եղած և որոնց վերայ ընտրական ժողովը պարտք է դրել իրանց իղձերը գրաւոր ներկայացնել Կաթողիկոսին, այժմ նոքա վերամշակում են այդ գրաւոր մանդատը և ուրիշ ոչինչ։

Պատգամաւորները բաւարարուած էին արդէն և որոշել էին մեկնել վեհարանից, երբ ներսի ժողովականներից ոմանք դուրս գալով յայտնեցին պատգամաւորներին, թէ ներսը հաւաքուած են 30-ից աւելի պատգամաւորներ և մշակում են դանազան խնդիրներ հայ եկեղեցու, դպրոցների և տնտեսութեան վերաբերեալ։ Պարզուեց նաև, որ այդ ժողովը ոչ թէ ընտրական ժողովի մանդատներն է մշակում, այլ դա զուտ պատգամաւորական մի ժողովակ է, որին մասնակցողների ցուցակը կազմել են մի երկու պատգամաւորներ և ներկայացնելով Վեհին՝ առել են նորա համաձայնութիւնը։ Ցուցակի մէջ մտցրել էին սինոդի անդամներին, առաջնորդներին և մօտ 25—30 աշխարհականներին, որոնց իրանք քարտուղ էին համարել և իրանց համախոհ։ Աւելորդ էին համարել կանչել այն բոլոր պատգամաւորներին, որոնք իրանց ղիրքով աննշան էին համարուել, աւելորդ էին համարուել դպրոցների ներկայացուցիչներ, Ռուսաստանի պէս կորած հայերի ներկայացուցիչներ և առհասարակ բոլոր քահանաներ, թէպէտ և նոքա պատգամաւոր էին եկած ամբողջ քաղաքների հասարակութիւնների կողմից։

Եւ մենք ականատես եղանք վանքի բակում խռնուած պատ-

գամաւորների խիստ դժգոհութեան. նոցանից շատերը ցրուեցին և հեռացան Էջմիածնից շատ տխուր տպաւորութեան տակ. իսկ մի մասը գնաց ճեմարան և ժողով կազմելով՝ որոշեցին գրաւոր յայտնել Վեհ. Հայրապետին, որ այն ժողովի որոշումները, ուր ներկայ չեն ամբողջ թեմերի և հասարակութեան ներկայացուցիչներ, չեն կարող պարտաւորական լինել ամբողջ հայ ժողովրդի համար, և իրանց միջից ընտրելով մի մասնախումբ, նորա ձեռքով Վեհին ներկայացրին իրանց հետևեալ որոշումը.—

Նորին վեհափառութեան
Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տ.
Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.-ի

Զանազան թեմերի հայ ազգաբնակութեանց և հաստատութիւնների պատգամաւորութիւններից և ներկայացուցիչներից

Ամենախոնարհ զեկուցումն

Այսօր, սեպտեմբերի 14-ին, կէսօրուայ 12 ժամին վեհարանի դահլիճում տեղի է ունեցել մի ժողով, ուր հրաւիրուած են եղել սինոդի անդամները, առաջնորդները և մի երկու պատգամաւորների կազմած ցուցակով ոմանք պատգամաւորներ թուով մօտ 30 հոգի. այդ պատգամաւորական ժողովում քննուել են մի քանի եկեղեցական—ազգային կարևոր ընթացիկ հարցեր, որոնք վերաբերում են Ռուսաստանի բոլոր հայ թեմերին և Մայր Աթոռին: Այդ ժողովին ամենևին ներկայ չեն եղել ամբողջ մի քանի թեմերի ներկայացուցիչներ, ինչպէս Աստրախանի, Ղարաբաղի և այլն:

Մենք, ներքոյ ստորագրեալ պատգամաւորներս ցուցակ կազմողների այդ վարմունքը համարելով ապօրինի և նոյն իսկ անպատուութիւն մեզ ուղարկող հասարակութիւնների համար, այս խոնարհ զեկուցագրով յայտնում ենք Ձերդ Սրբութեան, որ այդ պատգամաւորական ժողովի որոշումները չեն կարող պարտաւորական լինել բոլոր թեմերի համար, քանի որ դրանք ընտրուած չեն ընդհանուր պատգամաւորական ժողովից:

Ս. քահ. Տէր-Յովհաննիսեանց, պատգամաւոր Ստաւրոպոլի։
Յովսէփ Յովսէփեանց, պատգամաւոր Թիֆլիսի ծխական ուսումնարանների հոգաբարձութեանց։
Երուանդ Պողոսեանց, պատգամ. Նիժնի Նովգորոդի.
Բեհբուդ Մելիք Ալլահվերդեանց, Նուխւոյ հայ հասարակութեան և երկու եկեղեցական ծխական հոգաբարձութեան կողմից, նախագահ հոգաբարձութեան։
Դ. Թադէոսեան, ներկայացուցիչ Մարիամեան—Յովնանեան օրիորդաց դպրոցի և «Մեղու» աշխատանքի տան.
Անդրէաս Յակոբջանեանց, ներկայացուցիչ Արմաւիրի հայ հասարակութեան։
Ստեփանոս Տէր-Աւետիքեանց, ներկայացուցիչ Ղարաբաղի թեմի հայ եկեղեցական—ծխական դպրոցների.
Սարգիս քահ. Ասլանեանց, ներկայացուցիչ Աստրախանի եկեղեցական հայ աղքատաց հոգաբարձութեան։
Նոյ Ղասումեանց (բժ.) ներկայացուցիչ Վլադիկավկազի հայ հասարակութեան.
Սիմէոն Սէֆէրեանց, ներկայացուցիչ Արմաւիրի հայ հասարակութեան.
Ստեփան Մարտիրոսեան Խաչկուռուղեանց, պատգամաւոր Եկատէրինոդարի հայ հասարակութեան.
Աստուածատուր Երիցեան, «Սուրհանդակ» և «Խաթաբալա» թերթերի կողմից.
Գիւտ ա. ք. Աղանեանց, ներկայացուցիչ Թիֆլիսի հայ հոգևորականութեան, «Լումայ» ամսագրի խմբագրութեան և Թիֆլիսի կաթողիկոսական ընդունելութեան մասնաժողովի.
Ստեփան Գուլեանց, Թիֆլիսի համքարութեան ներկայացուցիչ.
Յարութիւն ք. Ճուղուրեանց, ներկայացուցիչ Թիֆլիսի հայ հոգևորականութեան.
Տիգրան Իւզբաշեանց, Շուշու գաւառի երկրորդ մասի պատգամաւոր.
Յակոբ Մելիքբախտամեանց, ներկայացուցիչ Գիւղատնտեսական ընկերութեան և «Գիւղատնտես» թերթի և կաթող. ընդունել. մասնաժողովի.
Յովհաննէս Գուրգէնբէգեանց, Թիֆլիսի կաթողիկոսական ընդունելութեան մասնաժողովի ներկայացուցիչ.
Սարգիս Կաֆեան, Թիֆլիսի վաճառականութեան և Թիֆլիսի կաթող. ընդունելութեան մասնաժողովի ներկայացուցիչ.
Սարգիս Իւզբաշեանց, Շուշուայ գաւառի Խաչենի բոլոր հա-

սարակութեան ներկայացուցիչ.
Եղիշէ քահ. Թարխանեանց և
Անդրէաս Տէր-Ցարութիւնեանց, Արցախու թեմական դպրոցի հոգաբարձութեան կողմից ընտրուած պատգամաւորներ.
Աս. Պալեանց, տեսուչ Արցախի թեմական դպրոցի:

Այս գրութիւնը ընտրուած ներկայացուցիչները մատուցին Վեհ. Հայրապետին, որ պատասխանել էր, թէ այս ժողովը ի հարկէ չէ կարող համարուել լիազօր պատգամաւորական ժողով, այլ միայն մասնաւոր խորհրդաժութիւն, իսկ այն մի խումբ պատգամաւորները մասնակցել են ժողովի Իր կարգադրութեամբ:

Մենք հրատարակութեան ենք տալիս այս ակտը ըստ միահամուռ ցանկութեան ճեմարանում կայացած պատգամաւորների ժողովի մէկ կողմից և միւս կողմիցընորոշելու համար էջմիածնի շուրջը օծման օրերում կատարուած եղելութիւնները:

ՀԱՅ

ՄԱՆԹԱՇԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՐԱԾ ԿՈՐՈՒՍՏԸ

Հոկտեմբերի 26-ին հողին յանձնեցին բարեգործ պ. Ալէքսանդր Մանթաշեանի ամուսին Դարիայի մարմինը:

Մեր ազգային յայանի գործիչներից մէկը բարեգործական ընկերութիւններից մէկի հանդիսի ժամանակ իւր ճառը սկսեց հետևեալ խօսքերով. «Թող կորչի բարեգործութիւնը»: Մենք բոլորովին համամիտ կլինէինք այդ գաղափարին, եթէ մեր ազգը հասած լինէր այն երջանիկ «ոսկէ դարին», ուր այլ ևս ոչ ոք կարիք չէր ունենայ բարեգործութեան ապաւինելու կամ բարի մարդկանց դուռը բաղխելու: Բայց, դժբախտաբար, հեռու, շատ հեռու է այդ երանելի ժամանակը:

Այս պատճառով Հայոց ազգին, այդ տգէտ, արհամարհուած, ճնշուած և կոտորուող հայ ժողովրդին դեռ շատ և շատ անհրաժեշտ է բարեգործութիւնը և ցանկալի՝ առատաձեռն բարեգործները:

Առհասարակ մենք սովոր ենք հռչակել հայ ազգը իբրև բարեգործ ժողովուրդ. բայց եթէ լաւ քննենք մեր պատմութիւնը, վերջին դարերի պատմութիւնը, կը տեսնենք որ բարեգործութիւնը ոչ թէ բուն ժողովրդի յատկութիւնն է եղած մեզանում, այլ միմիայն անհատների և այն բացառապէս վաճառական դասից. այս ճշմարիտ է մանաւանդ խոշոր բարեգործների նկատմամբ. Պապուշին, Ղարամեան, Մուրադ—Ռաֆայէլեան, Պէկճեան, Անանեան, Սանասարեան, Ղուկասեան և այլն, սոքա բոլորն էլ անհատներ էին և վաճառականներ և վերջին դարերի հայոց քաղաքակրթական զարգացման գործը տարուել է գրեթէ բացառապէս այդ բարեգործ անհատների ձեռքով և մեր բազմաթիւ կուլտուրական խոշոր հիմնարկութիւնները մենք դրանց ենք պարտական։

Այս տեսակ խոշոր նուիրաբերող—բարեգործներից է եղել միշտ և մեր քաղաքի որդի Ալէքսանդր Մանթաշեանը, որի առատաձեռնութիւնը, կարելի է ասել, գերազանցել է բոլոր յիշեալ բարեգործների նուիրատուութիւններից։

Պ. Մանթաշեանի բարեգործութեան եղանակը զգալի կերպով տարբերւում է միւս բարեգործութիւններից, որով հետև գրեթէ բացառապէս դոքա նուիրած են հայ եկեղեցու և հայ մատաղ սերնդի կրթութեան գործին։

Թիֆլիսի Վանքի նշանաւոր եկեղեցու մեծածախ վերաշինութիւնը, Փարիզի հայ գաղութի հոյակապ եկեղեցին, Էջմիածնի խոստացուած վերանորոգութիւնը, Ներսիսեան դպրոցի հսկայական շէնքը, Թիֆլիսի առևտրական դպրոցը, բազմաթիւ աւարտած և շարունակող ուսանողները, ևն ևն բոլորն էլ Մանթաշեանի առատաձեռնութեան պտուղներն են. այս դեռ յայտնին է, երևացողը, իսկ քանի հազարաւոր կարօտեալներ, աղքատ գրադէտներ, կարօտ հրատարակիչներ, տնանկ ուսուցիչներ, անօգնական եկեղեցականներ վայելել են Ա. Մանթաշեանի բարեգործութեան շնորհը, այդ մասին երևի ինքը պ. Մանթաշեանն էլ չի կարող հաշիւ տալ իրան, այնքան շատ են դոցա թիւը և տեսակը. և դեռ մինչև այսօր էլ վայելում են նորա խնամքն ու նպաստը։

Եւ այս ամեն բարեգործութիւնների մէջ պակաս օգնող և յորդորող չէ եղել պ. Մանթաշեանի նոր վախճանուած ամուսին տիկին Դարիան, որ լինելով իւր ամուսնու համար հոգատար և սիրող կողակից և որդեսէր մայր, միևնոյն ժամանակ կարեկցում էր ամեն մի վշտացեալի ու նեղացածի և իւր ամուսնու հետ միասին առատաձեռն օգնութիւն հասնում ամենքին։

Զարմանալի չէ ուրեմն, որ հանգուցեալի թաղումը կատարուեց այնպիսի մեծ շքով ու հոծ բազմութեան ներկայութեամբ, որպիսին երկար տարիներ չէր տեսել Թիֆլիսը խմբուած։

Հանգուցեալի մարմինը ամփոփուեց Վանքի գաւթում հիւսիսային կողմը այն գետնի վերայ, որ տարիներով առաջ պ. Մանթաշեանը գնել էր և նուիրել Վանքի եկեղեցուն։

Յաւիտենական հանգիստ մաղթելով հանգուցեալին խմբագրութիւնս իւր խորին վշտակցութիւնն է յայտնում Մանթաշեան գերդաստանին նորա կրած ծանր կորստի համար։

ԼՈՒՐԵՐ

Լսում ենք, որ հոկտեմբերի 24-ին Վեհ. Հայրապետը չորս եպիսկոպոս է ձեռնադրել.—Տաճկահայ վարդապետներից Ներսէս Խարախանեանին, Ատրպատականի առաջնորդ Կարապետ վարդապետին, Աստրախանի առաջնորդ Մխիթար վարդապետին և Մեսրովպ վարդապետ Տէր-Մովսիսեանին։ Առաջինը տեղական կրթութիւն ունի, երկրորդը իւր ուսումը ստացել է Գերմանիայում, նախ դոքտորի աստիճանով և ապա կրկին քննութիւն տալով արժանացել է լիցէնցիատի աստիճանի, երրորդը աւարտել է Ներսիսեան դպրոցը, իսկ չորրորդը դորպատի համալսարանը և ապա քննութիւն տալով արժանացել է մագիստրոսի աստիճանին։ Առաջին երեքը ձեռնադրուած են իբրև ընտրուած առաջնորդներ, իսկ վերջինին Հայրապետը ձեռնադրել է իւր գերիշխանութեամբ։

Կ. Պոլսից Բարերդ և Կարին գնալիս վատաբար սպանուեց Թիֆլիսեցիներիս քաջ ծանօթ գործիչ Եղիշէ Թօփչեանը։ Սպանութիւնը կատարուած է երևի կուսակցական հողի վերայ, բայց ինչ և լինի պատճառը, չենք կարող մեր զզուանքը չարտայայտել պատժի այդ ամենաանարդ ղէնքի նկատմամբ, ճիշտ այնպէս, ինչպէս որ տարով առաջ նոյնը յայտնեցինք և մի ուրիշ նման կեղտոտ սպանութեան՝ հրապարակախօս Արփիարեանի մահուան վերաբերութեամբ։

Եղիշէ Թօփչեանը վերջին 10 տարում ամենաաչքի ընկնող և ամենաեռանդուն գործիչներից մէկն էր և վերջին հալածանքի երեսից իւր գործունէութեան ասպարէզը փոխադրելով Կարին, հրատարակում էր այնտեղ «Յառաջ» անունով օրաթերթը։ Թօփչեանի սպանութիւնը առաւել ցաւալի է նրանով, որ նա լինելով բաւական պատրաստուած մարդ, երիտասարդ հասակի մէջ և լի եռանդով, նորա գործունէութեան աւելի լուրջ և արդիւնաւոր շրջանը պիտի նոր սկսէր այսուհետև, քանի որ կեանքի դառն իրականութիւնը տուել էր նորան և որոշ փորձառութիւն, որ անհրաժեշտ է ամեն մի հասարակական գործչի համար։ Հանգուցեալը թողել է բաւականին գրական հետաքրքրական աշխատութիւններ։

Հայերէն լեզուով աւետարանի պէտքը չափազանց զգացուում է վերջերս. այսպէս՝ Գուտենբերգ գրավաճառանոցը ստացել է աշխարհի հեռաւոր ծայրերից անդամ աւետարանի պատուէրներ, բայց հրապարակի վրայ ծախու օրինակներ չեն գտնուում, ստացուած պատուէրներից մէկը հարաւային Ամերիկայի Արգենտինեան հասարակապետութեան հայ բնակիչներից մէկից է։ Դարձնում ենք նոցա ուշադրութիւնը՝ որոնց հարկն է։

Թերթերը հաղորդեցին, որ այս օրերս կատարուել է Մարիամեան—Յովնանեան օր. ուսումնարանի հոգաբարձական ընտրութիւնը։ Այժմ մեզ հաղորդում են հաստատ աղբիւրներից, որ Մողնուոյ ծխականների մի մասը, պատգամաւորների ընտրութիւնը համարելով անկանոն՝ բողոքել է սինոդին և խնդրել չհաստատել կատարուած ընտրութիւնը և նոր ընտրութիւն նշանակել։

Կէնտրբրերիի արքեպիսկոպոսը մի խիստ համակրական նամակ է ուղղել Թիւրքահայերի պատրիարք Դուրեան Եղիշէ եպիսկոպոսին իւր հրաժարականի և նորան կից խնդիրների առիթով։

Կ. Պոլսից մեզ գրում են, որ ամեն. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը պատրաստում է իւր տասներկու տարուայ պատրիարքութեան մանրամասն պատմութիւնը, որ բաղկացած կլինի մի քանի հատորներից։

Դիտաւորութիւն կայ Թիֆլիզում հիմնել հայոց մի նոր հրատարակչական ընկերութիւն, որի կանոնադրութիւնը պատրաստ է արդէն։

40,000 հոգու ստորագրութեամբ մի թուղթ է ուղարկուած Կ. Պոլսի ազգային ժողովին, որով յայտնում են իրանց համամտութիւնը պատրիարք Դուրեանի հրաժարականին և պահանջում են ազգային ժողովից պաշտպանել պատրիարքի պահանջները կառավարութեան առաջ։ Ազգ. ժողովը մի ադմկալի նիստում որոշել է համակերպուել այդ առաջարկին։

Հոկտեմբերի 21-ին Նովոչերկասկի քանտից ազատուեց Ազգագրական Ընկերութեան նախագահ Ալէքսանդր Մելիք-Ազարեանը։

Այս օրերս կը վերսկսուի հրատարակուել «Հորիզոն» օրաթերթը, որ դադարել էր Նոյն թերթի գրասենեկապետ Դաւիթ Գալստեանի մահուան պատճառով։

Հոկտեմբերի 25-ին լոյս տեսաւ «Նոր-Դարի»ի 1909 թ. № 1։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Юрій Веселовскій. Русское вліяніе въ современной Армянской литературѣ, Москва 1909 50 к.

Եղիշէ ա. ք. Գեղամեանց. Պատմական քաղուածքներ. պրակ Դ. Եփրեմ կաթողիկոս. մասն II.

ՄԻ ՇԱԲԱԹ ՓԱՐԻԶՈՒՄ

Իզուր չէ, որ քաղաքակրթութեան մասին փոքր ինչ գաղափար ունեցող մարդը փափագում է Փարիզ տեսնել, գեղեցկութեան այդ չնաշխարհիկ տեսարանը։ Իզուր չեն դովում «Պարիզի գեղեցիկ ճաշակը»։ Գեղեցիկ է Փարիզը, աւելի քան գեղեցիկ իւր արուարձաններով, բաղմապարեան հնութիւններով և քաղաքակրթութեան և ճարտարապետական հրաշալիքներով։ Տեսնել Փարիզը, նշանակում է ծանօթանալ ֆրանսիական ազգի ամբողջ անցեալ և ներկայ թէ տնտեսական և թէ քաղաքակրթութեան պատկերի հետ։ Նա բովանդակում է իւր մէջ ոչ միայն նոր աշխարհի գիտութիւնը, փառքը և վայելչութիւնը, այլ և բաց է անում այցելուի առաջ ասորական, եգիպտական, փիւնիկեցւոց, պարթևաց, յունական և հռոմէական հին աշխարհի և կայսրութեան քաղաքական և տնտեսական կեանքի զանազան մոմենտներ և տեսարաններ։

Ցանկանում ես, ընթերցող, տեսնել այդ հրաշալիքը, մաիր Լուվր։ Փարիզի այդ համաշխարհային թանգարանում դու կը տեսնես Ասորեստանից բերած Սարդոնից թագաւորի պալատը, 2000 տարի Ք. ա. շինուած, նոյն տեղ է և Խորսաբաթի պալատը 800 տ. Ք. ա. և Ասորեստանի պեղումները. Մելպօմէնի արձանը, 366 թ. Ք. տ. Դիանայի տաճարը Հռոմում, որտեղ գիտութիւնն էին այրում. Հռոմէական Տիբրը, որի ներքև ընկած է գայլը, և երկու մանուկներ, իրար հրելով, աշխատում են... ծծել գայլի ստինքից, նորա կաթը։ Նայիր Արտաշէս Մնեմոնին, 700 տ. Ք. տ. այդ տեղ է կանգնած եգիպտական քարտուղարը, Հօրուս, Իսես և Օսելին չաստուածները՝ բուի դէմքով. Յունական Աթալայի գերեզման իջեցնելը, Տրդատ Պարթևաց և Հայոց թագաւորը 64 տ. Ք ա. Յունական Միլօի

Վենիուսի արձանը, քանդակագործութեան այդ գլուխ գործոցը, որի առաջ կանգնած հաղարաւոր այցելուներ ակնապիշ նայում են դեղեցկութեան ասստուածուհուն, և այլ շատ և շատ հազուադիւտ տեսարաններ: Բարձրացիր Էյֆելեան աշտարակը և դու կ'հրապուրուես տեխնիկայի գիտութեամբ կատարեալ հրաշակերտով:

Ցանկանում ես գեղարուեստական մտքիդ ճաշակին բաւականութիւն տալ, գնա Վերսայլ. Մոսկվայում, Բեռլինում, Վիեննայում և այլ շատ եւրոպական քաղաքներում հռչակաւոր գեղարուեստագէտների գործեր շատ եմ տեսել, իսկ Լիւդովիկոս XIV ի պալատում կախուածները գերազանցում են բոլորին: Հանճարի վրձինը, կարծես լեզու տուած անշունչ կտաւին, կենդանի մարդի պէս խօսում է հետդ:

Մի քանիսից լսել էի, որ Փարիզի կեանքը նոցա վերայ լաւ տպաւորութիւն չէ թողել. չեմ մեղադրում, և չեմ էլ կարող համաձայնել նոցա հետ, որովհետև նոքա միայն այդքանն են կարողացել տեսնել: Այս մօտ 4 միլիոն ժողովրդից համեմատական շատ փոքր մասը փողոցների վերայ, ռեստորանների, կաֆեների առաջ, բաց օդում նստած, ուտում են, խմում են և զուարճանում, բայց մնացեալ մեծագոյն մասը, քաշուած իրենց կաբինետները և լաբորատորիաները, դիշեր-ցերեկ, անդուլ աշխատանքով են պարապած, գիտութեան բազմատեսակ ճիւղերն են հարստացնում, յօդուտ հանուր մարդկութեան, նոր գիւտերով, ոմքեր էին և որտեղ են տպրում աշխարհահռչակ Պաստեօրը, Վ. Հիւգոն, Ժան Ժակ Ռուսսոն, Ռուն, Զոլան և քանի այդպիսի մտքի տիտաններ է տուել Փարիզը:

Ժան-Գուժան մաքուր փողոցի վերայ, Ելիսեան պալատներից ոչ հեռու կանգնած է Հայկական ճարտարապետութեամբ կառուցած հայոց եկեղեցին մեծանուն բարերար Ա. Մանթաշեանի ծախսով, որը իւր դիրքով և մեծութեամբ նմանութիւն ունի Վաղարշապատի Շողակաթի վանքին, փոքր ծաւալով, երկ. 42, իսկ լայնութիւնը մօտ 30 քայլաչափ, և ծախսուած է մօտ մի միլիոն ֆրանկ: Եկեղեցին պատկանում է շինող բարերարի սեփականութեան: Առատաձեռն բարեգործը մտադիր է նստարական ձևով հատատել ազգի անունով, որի համար նորից

պէտք է վճարէ կառավարութեան 120000 ֆր. նստարական ծախս։

Այդ եկեղեցին ոչ միայն կրօնական տեսակէտից նշանակութիւն ունի Փարիզում, այլ նորա գոյութիւնը մի անհրաժեշտութիւն է հայ գաղթականութեան համար։ Թէպէտ Փարիզի տարածութիւնը այնքան մեծ է, որ եկեղեցին անկարող է հեռու ապրող հայերին մօտեցնել, կապել եկեղեցու հետ և ծխական համայնք հաստատել, սակայն նա ունի մի կազմակերպուած մարմին՝ Հոգաբարձական Խորհուրդ անունով, որը աշխատում է նոյն մտքով։ Հոգաբարձութիւնը նոյն իսկ փորձել է ծխական հայոց դպրոց բանալ, բայց հայերի հեռու, ցրուած լինելու պատճառով, անկարելի է եղել այդ ցանկութիւնը իրագործել. կիւրակէ օրերը միայն հայերը յաճախում են եկեղեցի, այն էլ շատ քիչ թուով։

Ծանր է Փարիզում հայ քահանայի վիճակը, թէպէտ նա բաւականաչափ վարձատրում է տարեկան ռոճիկով հայ գաղութից։ Քահանան ոչ միայն կատարում է եկեղեցական պաշտամունք և ծիսակատարութիւններ, նա և սահպուած է մտածել կարօտ հայ ուսանողների, թափառականների, պատահող անծեռնհաս մարդկանց հարցասիրութիւններին բաւականութիւն տալ և շատերի էլ պէտքերը հոգալ, կարելոյն չափ։ Մեզ վերայ այդպէս տպաւորութիւն թողեց տ. Վռամշապուհ քահանայի բարի յարաբերութիւնը իւր դիմողների հետ։ Հէնց մեր ներկայութեամբ, մի ժամում, նա մի քանի նամակ ստացաւ մայրաքաղաքում և արուարձաններում ապրող հայերից, որոնք զանազան կարևոր հարցերի մասին սպասում էին պատասխանի և նա պարտաւոր է պատասխանել, որովհետև քահանան է նոցա առաջնորդը, կոնսիստորը, շատ դէպքերում էլ անցագիր վաւերացնողը. նա շատ անդամ և նպաստում է վաճառականական գործերի. և այլ քանի քանի այսպիսի կարիքներ հոգացողը և յանձնարարութիւն կատարողը։ Նոյն բարերար Մանթաշեանի ծախսով շինուած է եկեղեցու գաւթում մի յարմար բնակարան քահանայի համար, որի ներքին յարկում է տեղաւորուած եկեղեցական հոգաբարձական խորհրդարանը։

ՄԿՐՏԻՉ ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ. Բժ. Բ. Աղ.—«Գիտութիւն և բարոյականութիւն» յօդուածը կտպուի «Լումայ»-ի առաջիկայ համարում։

ՂԱՐԱԲԻԼԻՍԱ. Ս. Բօֆֆօր.—Ձեր վէպիկը կտպուի։

Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ. Մ. Բերբերեան.—ստացանք և կտպենք հետեւեալ համարում։

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

աշխատութիւնները

		Ռ,	Կ.
1	Աղօթատետր Ե. տպ. 1903.	—	10
2	Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած)	—	15
3	» » բ. տ. դ. տպ 1891	—	25
4	» » գ. տ. դ. տպ.	—	25
5	Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. բ. տպ. 1894	—	50
6	Կարնոյ գաղիր. պատմական տեսութիւն. 1891	—	10
7	Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893	2	—
8	Նոյն. գիրք Դ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսր. մրց. արժ. 1894.	7	—
9	Նոյն. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800. 1899.	4	—
10	Նոյն. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. 1902.	4	—
11	Նոյն. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I. 1801—2. 1904	4	—
12	Նոյն. գիրք Է. Դաւիթ կաթ. մ. II. 1803—4. 1907.	4	—
13	Նոյն. գիրք. Ը. Սիմէոն կաթ. մ. II. 1767—1776. 1908	4	—
14	Կարդ աստուածապաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 36 նկարով, Զ. տպ. 1907	—	50
15	Հնից-նորից հնախօս. ուղեւոր. պրակ Ա. 1900.	—	30
16	Պատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ԺԴ տարի.	—	50
17	Նամակագիրք Բ. տպ. հոխացրած 1909.	—	60
18	Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.—Առողջապահական խոհարարութիւն.	—	15
19	Զաքար Ղարդաձեանցի կտակը և Մշակի դառանցանքները (սպ.).	—	
20	Եկէք մեր պարտքը կատարենք՝ 1908	—	5՝

թարգմանութիւններ

21 Հաւատարմութիւնը ամեն արդելքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877 — 40
22 Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 1888 (սպ.) — 40
23 Դոն Քիշոտ լամանչեցի, Մ. Սէրվ. 1878 սպ. — 70
24 Դէորգ Ռօլլէտտօն, 1879 (սպռ.) — 60
25 Երրորդ ոսկի առակ Լաֆիդէի բ. տպ. 1893 — 10
26 Ռոբինզոն (հրատ. Թիֆ. տպագր. ընկերութ.) սպ. — 60
27 Զէտտէրտօնի ժառանգը, պատկերազարդ, 1882. սպ. 1 —
28 Ակտէա. տ. Սիսուվայի. 1885 սպառ. — 50
29 Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 սպ. — 20
30 Արծուի մտածմունքը, պրոֆ. Մ. Բողդան. 1892. — 5
31 Դիւղի սուրբը. Սվեատ. Զէխի, 1892 — 10
32 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892. 1 —
33 Դէպի Աթէնք, Հ. Սենկեվիչի բ. տպ. 1901 — 15
34 Մի կտոր հաց, Պօտապէնկոի բ. տպ. 1901 — 10
35 Որսորդ, Օ. Շրայների — 10
36 Մատուռի աւերակներում, Օ. Շրայների. — 10
37 Կարա. Իրլանդական զրոյց 1904 — 5
38 Անտառապետ Ֆրեդերիկ. Էրկման Շատրիանի. 1903 — 40
39 Տնային բժշկարան, պրակ . (գրքի ամբողջ կէսը) 1 —
40 Նոյն պրակ. Բ. գրքի ամբ. կէսը 1 50

հրատարակութիւններ

41 Հայոց գիրը 1893 1 50
42 Կ. Բեհրուդեան, Շուխ. 1893 — 15
43 Ռանդաբէ. Էմաէ, վէպ — 25
44 Ալբէր Այնօ, Քուրդի լեռան, 1894 — 20
45 Ճաղարբէգեան Յ. Հայոց. լեզու տ. տ. 1904 — 30
46 Խրիմեան Հայրիկ, Ժամանակ 1895 — 15
47 Սպիրի, Այծարած Մէնի 1885 — 15
48 Բակ. (Բարգէն վ.) Կիլիկիա 1896 — 10
49 Պեստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ. 1896 1 50
50 Մելքիսեդեկ արքեպ. Մուրատեան Պետրոս Շանշեան պատկերով. 1897 — 50
51 Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած 1904 — 50
52—63 Լումայ, գրական հանդէս 1896—1901 իւր. գիրքը 2 —
64—66 Լումայ երկամսեայ հանդէս 1902—1904 տարեկան. 6 —
67—68 Լումայ ամսագիր 1905—1906 իւր. տար. 8 —
69 Լումայ ամսագիր 1907 2 գիրք. 2 —
70 Լումայ ամսագիր 1908 № 1—4 4 —
71 Լումայ ամս. 1909 6 —
72 Յ. Պարոնեան, Ծիծաղ, պատկերով, 1899 1 25
73 » Արևել. առաքնաբոյժ կատակ. 1901 — 50
74 » Քաղաքավար. վնասները, 1901 — 75
75 Ստեփանոս Պալասանեան — 25
76 Ն. Տէր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան սպառ. — 60
77 Աշակերտի յուշատետր — 30
78 Զգացմունքների աշխարհ. — 30
79 Մելիք-Իւսուֆ — 25
80 Մ. Եօկայի, Ուրացողը. — 20
81 1901 Ս. Էջմիածնի Ժ.Զ դարադարձը. — 25
82 Եր. Շահազիզ, Մկրտիչ Էմին — 60

83 Կարալենկո, Կոյր երաժիշտը. — 60
84 Զորրորդ դարու հայ եկեղեցին — 20
85 Եր. Շահազիզ, Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը — 40
86 Իմ օրագիրը — 20
87 Մեծ Ներսէս — 25
88 Դ. Խաչկոնց, Հայոց կրօն. բանաստեղծութիւնը — 60
89 Կին վիպագիր Ե. Սպիրի — 10
90 Օր. Ն. Աղանեանց, թարգմ. Սև հացեր, բ. տ. — 5
91 Կարալենկո, Դատաստանի օրը. թարգմ. Մուշէ վարդ. — 40
92 Կ. Կոստ. Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ. 1902 — 20
93 Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ 1902 — 10
94 Ներսէս Մեծի յաջորդներ 1902 — 25
95 Մ. Գօրկի. Զէլկաշ. — 20
96 Քուչակ Նահապետի երգերը. — 16
97 Սահակ Պարթև — 25
98 Ապուշը, ժօրժ Էսպարբի, թարգ. օր. Ն. Աղանեանց, բ. տ. — 5
99 Վարժապետը. թարգմ. Լ. Մ.-Ա. — 5
100 Հաղարան Բլբուլ. — 30
101 Պատմական պատկերներ, Եր. Շահազիզ 1903 — 50
102 Ժ. Ժ. Ռուսսո. Էմիլ. 1. 1904 — 50
103 Նոյն մ. II. — 50
104 Խորէն արք. Գալֆայեան և Նալբ. Աղամիքը, Եր. Շահ. 1904 — 60
105 Հերոստրատ. Լ. Ֆուլդայի, թարգմ. Տ. Վ. 1904 — 50
106 Կանոնք ժողովոց. Մ. Ա. 1904 — 50
107 Ուղեղի նորոգումը. Ֆ. Դիկմելի թ. Օր. Ն. Աղան. 1904 — 20
108 Գթութիւն » » 1904 — 5
109 Գ. Ե. Սրուանձտեանի երկերը 1 Համով-հոտով 1904 1 25
110 Ալէմգիր. վէպ Վ. Փափազեանի, 1904 — 50
111 Սուտի հոգեբանութիւն. Դար. Ենգ. 1904 — 10
112 Հայրեր և զաւակներ Ի. Տուրգ. 1904 — 75
113 Կօնան Դոյլ. Բանակն ինչպէս ազատեցի. թ. Տ. Վ. 1904. — 15
114 Ազէրֆէզա. վէպ Վ. Փափազեանի, 1904 — 50
115 Ֆր. Դրկիւրէլ. Նոր Կուռք, թարգմ. Տ. Վ. 1905 — 30
116 Կար. Եղեան. Ս. Էջմ. Մ. Աթ. և Ռուսաց կառ. յարաբերութիւնների ծագումը. 1905. — 50
117 Զ. Ռիչարդսօն. Գրքերի ընտրութիւնը 1905 — 60
118 Իսլամ. տաճկ. թարգմ. 1905 — 20
119 Հոդեկան վարակումն և նրա նշանակութիւնը. բժշկ. Կ. Աղաջանեանց 1905 — 1
120 Խանզադէ, մեր արիւնոտ անցեալից 1907 — 20
121 Հայրենիք շաբաթաթերթի 1908 տարեկան 2 50
122 Գ. Վ. Յովսէփեան. Օրմանեան արքեպ. և կաթող. ընտրութիւն — 5
123 Զօն. Յ. Յովհաննիսեան և քննադատներ. 1908 — 5
124 Ե. Շահազիզ. Տ. Գաբրիէլ Պատկանեան. 1909 — 40

պատկերներ.

125 Ս. Լուսաւորչի իւղանկարի մեծադիր պատկեր 3 —
126 Նոյն կտաւի վերայ 15 —
127 Պետրոս Շանշեան — 10
128 Յակոբ Պարոնեան — 10
129 Աբգար Յովհաննիսեան — 10
130 Աւետիք Ղուկասեան — 10
131 Գարեգին եպս. Սրուանձտեանց — 10
132 Լուսայի պոստկարտ — 5
133 Տ. Տ. Մատթէոս II կաթ. Իգմիրլեան — 10
134 Մուրացան — 5

Լոյս տեսաւ

ՆԱՄԱԿԱԳԻՐՔ

երկրորդ ճոխացրած տպագրութիւն

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Դիմել Ն. Աղանեանի տպարան

Բացուած է 1910 թ. բաժանորդագրութիւնը

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ.

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին	3 ռ.	մանկավարժ. բաժ.	4 ռ.
Կէս տարուանը . .	1 ռ. 80 կ.	.	2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը . .	— 30 կ.	.	— 35 կ.
Պարսկաստանում . .	3 ռ. 50 կ.	.	4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆՀ ֆր.		ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.		15 ռ.

ԼՈՒՄԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 14 ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1909 թուին Լուման լոյս է տեսնում իւր նախկին դիրքով ամեն ամսի 20-ից յետոյ, բաղկացած 64—80 երեսներից։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին պարզ, մի էջի վրայ և ոչ աւել քան 32 տպ. երես։
2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրւում։
3. Նիւթերը չեն վերադարձնւում. յետ ստանալ ցանկացողները պիտի ուղարկեն փոստի ծախք։
4. Զտպուող նիւթերի մասին ծանուցում է տրւում ամսագրի մէջ պատասխանների բաժնում։
5. Թարգմանական նիւթեր ընդունւում են շատ կարճ և ընտիր հեղինակների։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 ռ., կէս տ. 4 ռ.,
Արտասահման „ 8 „ „ 5 „

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ

ԵՂԻՇԷԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Աշխատութեամբ

ԳԻՒՏ ա. ք. ԱՂԱՆԵԱՆԻ